ՆՈՐԱՀԱՅՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԳԼԽԱՎՈՐԱԾ «ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԿՐԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ՔՆՆԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ» ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հովհ. Թումանյանի ստեղծագործական և հասարակական-քաղաքական մեծածավալ գործունեությունը մշտապես թելագրում է նորանոր պրպտումների, վերծանումների ու մեկնաբանությունների անհրաժեշտություն: Այս առումով հարկ է դիտարկել բանաստեղծի գլխավորած Հայ հայրենակցական միությունների գործունեությունը՝, մասնավորապես նրա հիմնադրած «Համաշխարհային պատերազմում հայ ժողովրդի կրած վնասների քննիչ հանձնաժողովի» աշխատանքները, որն առ այսօր ուսումնասիրության հատուկ նյութ չի դարձել:

Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո Փարիզում սկսվում էր խաղաղության վեհաժողով, և հզոր ու ոչ հզոր ժողովուրդներից պահանջվում էր ներկայացնել հաշվարկված փաստացի հուշագիր (մեմորանդում). հզորների պարագայում ծառայությունների և մասնակցության չափերի, ոչ հզորներինը՝ ըստ կրած վնասների ու կորուստների: Իսկ հայ ժողովրդի կորուստները հենց միայն 1918 թ. ընթացքում անհաշիվ–ահռելի էին...

Ահա նման մթնոլորտում՝ հոկտեմբերի սկզբից նախապատրաստական աշխատանքների արդյունքում 1918 թ. նոյեմբերի 21-ին Հայ հայրենակցական միությունների կենտրոնական խորհրդի ընդհանուր ժողովում հիմնվում է վերոհիշյալ հանձնաժողովը՝ Հովհ. Թումանյանի գլխավորությամբ: Արդեն իսկ նոյեմբերի 24-ին կայացած Հայրենակցական միությունների վարչությունների ընդհանուր ժողովում, ապա և դեկտեմբերի 4-ի միությունների միության կենտրոնական խորհրդի նիստում հանձնաժողովի նախագահ Թումանյանը հանդես է գալիս Քննիչ հանձնաժողովի ստեղծմանը, նրա խնդիրներին ու գործունեությանը նվիրված զեկույցներով: Քննիչ հանձնաժողովի անհետաձգելի խնդիրն ու նպատակն էր Առաջին աշխարհամարտին՝ հայերի մասնակցության, Հայոց եղեռնի, հայ բնակչության գույքի և ունեցվածքի կողոպուտի ամփոփ հուշագիր կազմելն ու ներկայացնելը Փարիզի խաղաղության վեհաժողովին: Հասկանալի է՝ փոխհատուցման ակնկալիքով: 1918 թ. դեկտեմբերի 14-ի թվակրով զորավար Անդրանիկին հասցեագրած նամակում Հովհ. Թումանյանը մասնավորապես հայտնում էր. «Մեր կառավարությունը մինչև էսօր էլ կոնգրեսին (Փարիզում կայանալիք խաղաղության վեհաժողովին.–Ան. Զ.) ներկայացնելիք մեմորանդումի համար հոգս չքաշեց, նյութեր չհավաքեց, թե ինչ կորուստներ ենք ունեցել մենք կամ ինչ բռնություններ են կատարվել մեր ժողովրդի վրա: Ստիպված մենք սկսեցինք՝ Հայրենակցական միությունների կենտրոնական խորհուրդը: Այժմ իմ նախագահությամբ մի բյուրո է կազմված և աշխատում է եռանդով: Կառավարությունն էլ տվել է իր սանկցիան»[2]: Ըստ այդմ, ստեղծվում է չորս ենթահանձնաժողով կամ բաժին. պատմաքաղաքական, ռազմապատմական, տնտեսական և քրեական: Առաջին բաժինը ղեկավարելու համար հրավիրվում է պատմաբան Լեոն. ռազմապատմականը՝ ժամանակավոր, մի քանի զինվորականներով կառավարելու է նշանակվում Տիգրան Իեկզաքյանը, տնտեսականի վարիչ է նշանակվում Քրիստափոր Վերմիշյանը, քրեականի՝ Տիգրան Հովհաննիսյանը:

---

1 *Հայ հայրենակցական միությունների գործունեության մասին տե՛ս հանդեսի սույն համարում տպագրված Լ. Կարապետյանի «Թումանյանը և հայոց հայրենակցական միությունը» հոդվածը (էջ 30–46):*

2 *Հովհ. Թումանյան. Երկերի լիակատար ժողովածու. հ. 10, Երևան, 1999, էջ 299:*

Կարճ ժամանակից ռազմապատմական բաժնի վարիչ է նշանակվում 1914 թ. աշնանից Կովկասյան ճակատում և Արևմտյան Հայաստանում լայն գործունեություն ծավալած զորավար, գեներալ-մայոր, բանաստեղծ Ալեքսանդր Կուլեբյակինը[3], իսկ Քրիսա. Վերմիշյանին փոխարինում է Աշոտ Աթանասյանը: Քննիչ հանձնաժողովն իր գործունեությունը բնականոն կազմակերպելու համար ընդունել է կանոնագրություն և հաստատել աշխատանքային հատուկ հրահանգ: Ըստ այդմ, նշենք, որ աշխատանքները, ինչպես վկայում են փաստաթղթերը, ընթացել են հստակ կանոնակարգված և կազմակերպված:

Եվ, սակայն, հենց սկզբից նյութական-ֆինանսական սուղ վիճակը խանգարում է քննիչ հանձնաժողովի աշխատանքներին: Իսկ այդ աշխատանքների համար, ըստ նախնական հաշվարկների, պահանջվելու էր մոտ կես միլիոն ռուբլի: Նախատեսվում էր, որ 300000 ռուբլին կտրամադրի Հայաստանի կառավարությունը, իսկ 200000 ռուբլին՝ հայ վաճառականությունը:

Ստեղծման պահից Քննիչ հանձնաժողովը ծավալում է լայն գործունեություն. դիմում է զանազան կազմակերպությունների, անհաա անձանց՝ հանձնաժողովի աշխատանքներին աջակցելու խնդրանքով, շրջաններ է ուղարկում իր ներկայացուցիչներին՝ տեղում նյութեր հավաքելու նպատակով, միաժամանակ կողոպտված և անօթևան հազարավոր հայերից դիմումներ է ստանում: Դիմողների մեջ էին ոչ միայն ամբողջական տարածքների բնակիչներ, այլև անհատներ, ինչպես օրինակ, նշանավոր ճարտարապետ Թորոս Թորամանյանը: Եվ եթե դիմողների մեծ մասի կորուստները հիմնականում նյութական արժեքներ էին, ապա ճարտարապետինը զուտ հոգևոր բնույթ ունեին և վերաբերում էին ողջ հայ ժողովրդին[4]:

Հանձնաժողովի աշխատակիցների նյութական վիճակը, սակայն, մնում է անփոփոխ, որն ուղղակի և անուղղակի խանգարում է հանձնաժողովի բնականոն գործունեությանը: 1919 թ. մարտ-ապրիլ ամիսներին իրար հետևից գումարվում են Նիստեր՝ Հայրենակցական միությունների կենտրոնական խորհրդի. գործադիր մարմնի, Քննիչ հանձնաժողովի անդամների, հայ վաճառականության ներկայացուցիչների, Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչի մասնակցությամբ, որտեղ հանգամանորեն ներկայացվում ու գնահատվում է կատարվող աշխատանքը, առաջարկություններ են արվում դրանց հետագա շարունակման համար, ֆինանսական հարցերը կարգավորելու ուղիներ են որոնվում: Ապրիլի 14-ի նիստում արդեն Թումանյանը մասնավորապես նշում է, որ ՀՀ կառավարությունը խոստումը ֆինանսական առումով չի կատարել. «բյուրոյի սկսած չավագանց կարևոր գործը մնում է կիսատ, որի պատասխանատվությունը ընկնում է անպայման Հայոց կառավարության վերա»[5]: Նիստում որոշվում է «առայժմ բյուրոյի գործունեությունը կանգնեցնել»: Ճիշտ է, Քննիչ հանձնաժողովը «ժամանակավորապես» դադարեցնում է գործունեությունը, սակայն որոշ գործառույթներ շարունակում է կատարել մինչև 1919 թ. վերջը:

Քննիչ հանձնաժողովի գործունեության մասին հարյուրավոր անտիպ վավերագրեր կան: Ստորև հրապարակվող նյութերը Հայրենակցական միությունների կենտրոնական խորհրդի նիստերի արձանագրություններ, զեկուցագրեր, նամակներ են, որոնք կազմում են Հայաստանի պատմության կենտրոնական պետական արխիվում (ՀՀ ՊԿՊԱ) ամփոփված

---

3 Ա. Կուլեբյակինի զինվորական, դրական-հասարակական գործունեության մասին մանրամասն տե՛ս Ա ն. Զ ա կ ա ր յ ա ն. Поэт-генерал Александр Кулебякин и Армения.– «Պատմա-բանասիրական հանդես», 2001, №2, էջ 99–129: Ա. Հ. Զ ա ք ա ր յ ա ն. Գեներալ Ալեքսանդր Կուլեբյակինի մասնակցությունը Համաշխարհային պատերազմում հայ ժողովրդի կրած վնասների քննիչ հանձնաժողովի աշխատանքներին.– «Հայկական բանակ», 2002, №1–2, էջ 155–161:

4 Տե՛ս Ա լ. Ղ ա զ ի յ ա ն. Ճարտարապետ Թ. Թորամանյանի դիմումը առաջին համաշխարհային պատերազմում հայ ժողովրդի կրած վնասները քննող հանձնաժողովին՝ 1918 թ. ապրիլին Թուրքական արշավանքի հետևանքով իր կրած կորուստների վերաբերյալ.– «Պատմա-բանասիրական հանդես», 1999, №2–3, էջ 388–396:

5 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 244, ց. 1, գ. 15, թ. 20:

նույն հարցին առնչվող նյութերի մի չնչին մասը[6]: Այդ նյութերը մի հայտնի չափով պատկերացում են տալիս, թե ինչպիսի պետական-քաղաքական մտածողությամբ, հայրենասիրական, մարդասիրական անձնվիրությամբ է ծառայել մեծ բանաստեղծը՝ Հովհ. Թումանյանը, հարազատ ժողովրդին պատմական ծանր ժամանակներում՝ 1918–1919 թթ. ընթացքում:

Փաստաթղթերը հրապարակում ենք բնագրի լեզվով՝ հայերեն և ռուսերեն, ժամանակագրական կարգով, լեզվաոճական մասնակի միջամտությամբ:

ԱՆՈՒՇԱՎԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ

№ 1

Արձանագրություն

«3» հոկտեմբերի 1918 թ. կայացավ Հայր<ենակցական> Միութ<յունների> կենտրոնական խորհրդի նիստը – նախագահությամբ Հովհաննես Թումանյանի, մասնակցությամբ Ագուլիսի, Գանձակի, Ախալքալաքի, Ալեքսանդրապոլի, Ղազախի, Նոր-Բայազետի, Նուխու, Լոռու, Նախիջևանի և Փամբակի հայրենակցությունների ներկայացուցիչների:

1) Նախագահ Հովհաննես Թումանյանի առաջարկությամբ խորհուրդը քննության առնելով Շուլավերի շրջանում հայերի և թուրքերի մեջ ծագած տարաձայնության ու դժդոհության խնդիրը, որ վերաբերվում է ազգաբնակության մի մասից խլված գույքին և նկատի առնելով մեծամասնության տեսակետը այս հարցի մասին, որոշում է. Հանձնարարել Շուլավերի հայրենակցության վարչությանը. ուղարկել Շուլավերի շրջանը հատուկ մի պատգամավորություն վերոհիշյալ դեպքը տեղնուտեղը քննելու և միջադեպը հարթելու նպատակով:

Վերոհիշյալ խնդիրը քննելիս – Նուխու հայրենակցության ներկայացուցիչ պ. Սոտնիկյանը խնդիր է հարուցում, որպեսզի վնասներին, ավերած–կոտորածներին վերաբերվող քննություններ կատարվեն նաև մյուս հայկական գավառներում, որպիսի քննությունը կարող կլինի պարզել, թե՞ որքան վնաս ու կոտորած է պատճառված հայ ազգաբնակությանը:

– Որոշվում է. այս հարցը հետաձգել և առաջիկա նիստերից մեկում մանրամասն քննության առնել: ...

Նախագահ՝ Հ. Թումանյան
Քարտուղար՝ Հ. Համբարձումյան

ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 244, ց. 1, գ. 4, թ. 73–74: Բնադիր: Ձեռագիր:

---

6 *Քննիչ հանձնաժողովի գործունեությանը վերաբերող փաստաթղթերի հնարավորինս ամբողջական հավաքածուն առաջիկայում հրատարակելու ենք առանձին գրքով:*

* *Այս և հետագա արձանագրություններից հրապարակում ենք միայն այն հատվածները, որոնք առնչվում են խնդրո առարկա հարցին:*

№ 2

Արձանագրություն

«10» հոկտեմբերի 1918 թվին կայացավ Հայրենակց<ական> միությունների կենտրոնական խորհրդի նիստը – նախագահությամբ Հովհաննես Թումանյանի և մասնակցությամբ Ախալքալաքի, Ալեքսանդրապոլի, Գանձակի, Լոռիի և Նոր-Բայազետի հայրենակցությունների ներկայացուցիչների:

Խորհուրդը լսեց. ... բ) Մարդար Ավետիսյանի և խորհրդի մյուս անդամների առաջարկը – կազմակերպել մի հանձնաժողով, որը ուսումնասիրելով պատերազմական չորս տարվա անցուդարձը հայ ժողովրդի վերաբերմամբ և այդ ուսումնասիրության հիման վերա կազմի մի լուրջ մեմորանդում – ներկայացնելու խաղաղության համադումարին:

Խորհուրդը որոշում է. ... երկրորդ խնդրի վերաբերությամբ – հանձնել գործադիր մարմնին քննիչ մեմորանդում կազմելու համար ընտրվելիք հանձնաժողովի և նրա անելիքի հարցը և ներկայացնել մանրամասն զեկուցում:

Նախագահ՝ Հ. Թումանյան
Քարտուղար՝ Հ. Համբարձումյան

ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 244, ց. 1, գ. 4, թ. 75: Բնագիր: Ձեռագիր:

№ 3

Արձանագրություն

«31» հոկտեմբերի 1918 թ. կայացավ Հայրենակցական միությունների կենտրոնական խորհրդի նիստը–Նախագահությամբ Հովհաննես Թումանյանի, մասնակցությամբ Գանձակի, Ախալքալաքի, Ալեքսանդրապոլի, Նոր-Բայազետի և Լոռու հայրենակցությունների ներկայացուցիչների:

Խորհուրդը, լսելով քարտուղար Հ. Համբարձումյանի զեկուցումը՝ Հաշտության Համադումարին հայ ժողովրդի կողմից մի հուշագիր ներկայացնելու մասին և այդ հուշագիրը կազմելու գործի կազմակերպության մասին և քննելով այդ խնդիրը ըստ էության ու ձևի... միաձայն որոշեց. ա) Հուշագիր կազմելու գործը իրագործելու համար ընտրել մի հանձնաժողով՝ բաղկացած գործագիր մարմնի անդամներից և սույն նիստին ընտրված՝ Պ. Աբելյանից, Ջ. Տեր-Գրիգորյանից, Խզմալյանից, Ն. Սարգսյանից, որի վրա դնել հուշագիր կազմելու գործի իրագործումը, հրավիրելով այս հանձնաժողովի նիստերին՝ 1. Հայաստանի կառավարության ներկայացուցիչ Ա. Ջամալյանին, 2. դաղթականական գլխավոր խորհրդի նախագահ Հով. Արղությանին և Վրաստանի Հայոց Ազգային խորհրդի նախագահին, որոնց դիմել պաշտոնական գրություններով. ... գ) Հուշագիրը կազմող հանձնա-

ժողովի նիստը նշանակել շաբաթ օրը, երեկոյան ժամը 7-ին (նոյեմբերի 2-ին) Հովհաննես Թումանյանի բնակարանում:

Նախագահ՝ Հ. Թումանյան
Քարտուղար՝ Հ. Համբարձումյան

ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 244, ց. 1, գ. 4, թ. 76: Բնագիր: Ձեռագիր:

№ 4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
Ա. Գ. Մ. *Երևան*
ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՄԻՍՍԻԱ
ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

Թիֆլիս *Արտաքին գործերի պ. մինիստրին*

1 նոյեմբերի 1918 թ.
№ 1665

Հոկտեմբերի 8-ին 1099 գրությամբ ես Ձեր ուշադրությունն էի հրավիրել քննիչ հանձնաժողով կազմելու անհրաժեշտության վրա, որպեսզի օր առաջ փաստային կերպով պարզենք մեր մարդկային զոհերի և տնտեսական կորուստների որակն ու քանակն ապագա համաշխարհային կոնգրեսին ներկայացնելու համար: Դժբախտաբար այս խնդիրը մինչև օրս առկախ է մնացել, իսկ ընդհանուր հաշվեհարգարի օրը, բոլոր նշաններից երևում է, որ մոտենում է:

Տեղվույս հասարակական շրջաններում վերջին ժամանակներս շատ է խոսվում այս գործը կազմակերպելու անհրաժեշտության մասին: Անցյալ շաբաթ մեր հայրենակցական միությունների կենտրոնական մարմինը ինձ ժողովի էր հրավիրել այս հարցի մասին խորհրդակցելու: Միությունների կենտրոնական մարմինը, ինչպես պարզվեց այդ ժողովում, ծրագրում է իր ձեռներեցությամբ կազմակերպել այս գործը: Ենթադրվում է մեր զոհերի և կոտորածների մասին մանրամասն անկետներ կազմակերպել բոլոր տուժած գավառներում և դրա հետ միասին ժողովել և խմբագրել այն բոլոր նյութերը, որ մինչև օրս լույս են տեսել մամուլի օրգաններում: Բացի դրանից՝ մտադրություն կա կազմել, համաձայն ժողոված փաստերի մի քանի մեծ ու փոքր մեմորանդումներ խաղաղության կոնֆերանսի ժամանակ օգտագործելու համար:

Ես հայտարարեցի, որ այս հարցը արդեն դրած է կառավարության առաջ, բայց մինչև նրա լուծելը վատ չի լինի, իհարկե, որ հասարակական ձեռներեցությունը ևս հանդես դա բավարարություն տալու այս կարիքին, սակայն միայն այն պայմանով, որ հենց որ կառավարական հանձնաժողովը կազմվի ներկա մարմինը նրա համար օժանդակիչ դեր ստանձնի՝ իր նյութերը դնելով նրա տրամադրության տակ: Ինքնըստինքյան հասկանա-

լի է, իհարկե, որ ապագա խաղաղության վեհաժողովին մեմորանդումներ կարող են ներկայացվել միմիայն կառավարության կողմից կամ նրա համաձայնությամբ:

Համաձայնվելով այս պահանջներին՝ միությունների կենտրոնական մարմինը խնդրեց դնել կառավարության առաջ հետևյալ երկու հարցը.

ա. Եթե կառավարությունը չկամենա կամ ի վիճակի չլինի շուտով քննիչ հանձնաժողով կազմելու, արդյոք նա չի համաձայնվի կառավարական օրգանի հանդամանք տալ Միությունների կազմելիք հանձնաժողովին:

բ. Արդյոք կառավարությունը չի համաձայնվի մի որոշ գումարով մասնակցել այն մեծ ծախքերին, որ անելու է այս գործի համար Միությունների կենտրոնական մարմինը:

Հայտնելով Ձեզ այս մասին, խնդրում եմ Ձեր պատասխանը վերոհիշյալ երկու հարցի մասին:

Խորին հարգանոք

Հավատարմատար Հայաստանի
Հանրապետության Վրաստանում
<Ա. Ջամալյան>

ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 221, ց. 1, գ. 31, թ. 18: Թողոն: Մեքենագիր:

№5

Արձանագրություն

«2» նոյեմբերի 1918 թ. կայացավ հուշագիրը կազմող հանձնաժողովի նիստը, որին ներկա էին. խորհրդի գործադիր մարմնի անդամները – Հովհաննես Թումանյանը, Հ. Համբարձումյանը և Մարգար Ավետիսյանը. հանձնաժողովի անդամները – Ն. Սարգսյանը, Խզմալյանը, Պ. Աբելյանը, Ջ. Տեր-Գրիգորյանը – Հայաստանի կառավարության դիվանագիտական ներկայացուցիչ Ար. Ջամալյանը:

Քննելով գործի կազմակերպության խնդիրը և նկատի ունենալով, որ դրված նպաակը իրագործելու համար նախ և առաջ անհրաժեշտ է ձեռք բերել միջոցներ – ծախսքերը ծածկելու համար, որ այդ նկատմամբ անհրաժեշտ է կազմակերպել գործի ֆինանսական կողմը և որ գործի մյուս կողմերը քննելու և կազմակերպելու համար անհրաժեշտ է հրավիրել նաև տեղյակ անձանց, հանձնաժողովը որոշեց.

ա) խնդրել նախագահ Հովհաննես Թումանյանին և Արշակ Ջամալյանին – գործի ֆինանսական կողմը ապահովելու համար գումարել ֆինանսական մի հանձնաժողով՝ կազմված հայ ականավոր ֆինանսիստներից – և այդպիսով հոգալ գործին անհրաժեշտ միջոցները.

բ) Հուշագիրը կազմակերպելու խնդիրը քննելու նպատակով նշանակել մի այլ նիստ, որին հրավիրել մասնակցելու՝ 1)Հովսեփ Խունունցին, 2)Մ.

Բունիաթյանին, 3)պրոֆես. Ղամբարյանին, 4)Հար. Փիրալինյանին, 5)Մինաս Բերբերյանին, 6)գաղթականական գործի վարիչ Հով. Արղությանին, 7)Ազգային խորհրդի նախագահին և 8)Իսահակ Դոլուխանյանին:

գ) Հանձնաժողովի նիստը նշանակել նոյեմբերի 5-ին, երեքշաբթի, երեկոյան ժամը 7-ին, Հովհ. Թումանյանի բնակարանում:

Ի տ. նախագահի Հ. Թումանյան
Ի տ. քարտուղարի Հ. Համբարձումյան

ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 244, ց. 1, գ. 4, թ. 77: Բնագիր: Ձեռագիր:

№ 6

<Արձանագրություն>

21/XI–<19>18 թ.

Մասնակց<ությամբ>
Հովհ<աննիսյան>
Բեգզ<ադյան>
Դոլուխանյան
Լեո
Պապյան
Բեգզագյան
Տ. Հովհ<անիսյան>
Լազարյան
Շահպարոնյան
Ստ. Տեր-Գրիգորյան
Պ. Աբելյան
Խան–Աղյան(?)
Հայր-Հակոբյան
Օհանջանյան
Ռ. Աֆրիկյան
Ար. Բաղդասարյան
Աչ. Աթանասյան
Խաչ. Վերմիչյան
Հ. Համբարձումյան

Հովհաննիսյան–նախագահը–մի քանի խոսքով զեկուցում է անցյալ որոշումների – և դնում է խնդիրը – – – – – վերջնականապես լուծել գործը և անցնել տեղի իրականացումը –

Որոշվում է – հանձնել Վերմիչյանին, Հովհաննիսյանին և Լեոյին–, որոնք հայտնում են իրանց պատրաստակամությունը: Այդ անձինք կազմում են կենտրոնական բյուրոն, որին հանձնվում է գործի ամբողջ կազմակերպությունը:

Գործի կազմակերպ<ական> ձեռնարկությունը վերցնում է իր վերա Հայր<ենակցականների> կենտրոն<ական> խորհուրդը. եթե Հայաստ<անի> կառավ<արությունը> տա իր հավանությունը – կհամարվի պաշտոնական, իսկ հակառակ դեպքում – օժանդակ մարմին –

Ֆինանսական հանձնաժողովի տված տեղեկությունները –

Որոշվում է կազմել բյուրոյին կից մի ֆինանսական հանձնաժողով: –

Ֆինանսական հանձնաժողովի ներկայացուցիչը մտնում է բյուրոյի մեջ որպես իրավազոր անդամ –

Բյուրոյի վերջնական կազմը – Տիգ<րան> Հով<հաննիսյան>, Վերմիչ<յան> և Լեո, Կենտրոն<ական> խորհրդի նախագահը, զինվորական ներկայացուցիչը և ֆինանսական ներկայացուցիչը և մասնավորապես Ջամալյանը:

Վերջնական ինստանցիան – Միությունների միության կենտրոնակ<ան> խորհուրդը – հանձնաժողովը վերանում է.–

Հարց է բարձրանում բյուրոյի անդամների վարձատրության խնդիրը – որոշվում է – վարձատրությունը ընդունել օրավարձի ձևով... Այս հարցը որոշվում է քննիչ բյուրոյի անդամների բացակայությամբ, համաձայն որի վերջիններս թողնում են նիստը –

Որոշվում է. վարձատրության քանակը ընդունել – օրածախս – ընդունել հարյուրական ռուբլի – ձայների մեծամասնությամբ.– քարտուղարի հարցը հանձնել բյուրոյին.

Որոշվում է – Բյուրոյին որպես անդամ պ. Բեգզադյանին

Որոշվում է խնդրել ֆինանսական հանձնաժողովի անդամներին վաղը ևեթ որոշել այդ հարցը և պատասխանել բյուրոյի նախագահին:

Պողոս Աբելյանը առաջարկում է. դիմում անել դաշնակիցներին – Ջամալյանը հայտարարում է, թե այդ գործը կատարված է Հայաստ<անի> կառավ<արության> կողմից – ուստի հարցը <1 անընթ.> այն նկատումով, որ Կենտր<ոնական> խորհրդի գործն է այդ:

Վերջին խնդիրը հանձնվում է Արամին, Պողոսին և Համբարձումյանին:

Նույն օրը տեղի ունեցավ բյուրոյի նիստը – որը քննելով գործի կազմակերպության գործը, որոշեց –

զինվորական մասին որպես վարիչ – այս հարցը հետաձգել և քննել հետևյալ նիստին –

Ղարաքիլիսա ուղարկել լուսանկար և քննիչ – այդ գործը հանձնել Տիգրան Հովհաննիսյանին –

Քննվում է բնակարանի հարցը – որոշվում է այդ հետաձգել, ընդունելով, որ ժամանակավոր բնակարան ընդունել բանկը:

Վերմիչյանը առաջարկում է մի նախնական դիմում հայ ժողովրդին – որոշվում է հանձնել Լեոյին – կազմել դիմումը և քննել հետևյալ նիստին.–

Բաքվի մասին –

Բյուրոյի կազմակերպության գործի մասին խնդրել բերել ծրագիրներ – ամեն մի վարիչին առաջարկել ներկայացնել գործունեության ծրագիրներ:

Բերել բոլոր շրջանների ցուցակը – հայրենակցությունների ցուցակը – որոշվում է հետևյալ նիստը ուրբաթ, երեկոյան ժամի 7-ին, դանկում:

Ցուցակը ընտրվածների –

Բերբերյան
Էնֆիաճյան
Ղուլյան

վաճ<առականներ>
Բողդան Խան. Արզումանյան

(Жуковс. 8)
Ռուբեն ... Աֆրիկյան
(Грибоедов. 26)
Արամ Եգ. Բաղդասարյան
(... 9)
Մեր խորհուրդը –
Ազգ<ային> խ<որհրդի> նախագահ
Ջամալյան
Արղության
Դոլուխանյան
Բեգզագյան
Տ. Հովհաննիսյան
Վերմիշյան
(Христ. Абб. Кавк.)
Լեո
Փիրալյան
Ա. Աթանասյան
Բունիաթյան

ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 244, ց. 1, գ. 4, թ. 79–81: Բնագիր: Ձեռագիր: Սևագիր:

№ 7

<22 ноября 1918 г.> Эривань

Министру Иностранных <Дел>

Союзом землячеств <с> моим участием организовано бюро для выполнения задач, намеченных моих 1099 и 1665. Члены Ованес Туманян, Лео, Вермишев, Тигран Иоанисян, один военный, я exofficio . Работа на частные средства. <В> случае создания особого соответствующего правительственного органа бюро предоставит ему свои материалы и будет руководствоваться его указаниями. Бюро приготовит опросные листы, отправит уполномоченных и комиссии <в> Лори–Памбак, Ахалкалаки. Прошу предписать местным властям оказать содействие органам бюро<.> 1932.

<А. Джамалян>

ЦГИА РА, ф.221, оп. 1, д. 31, л. 20. Отпуск. Машинопись.

---

* *Ա. Ջամալյանը մեկ այլ հեռագրի մեջ հայտնում է, որ Քննիչ հանձնաժողովի կազմում ընդգրկվել է նաև Տ. Բեկզադյանը (նույն տեղում, թ. 21):*

№ 8

<Конец 1918 г.>

ПОЛОЖЕНИЕ
БЮРО ПО УСТАНОВЛЕНИЮ ПОТЕРЬ АРМЯНСКОГО НАРОДА ОТ ВСЕМИРНОЙ ВОЙНЫ

1) Для установления всех физических, культурных, моральных и экономических потерь армянского народа организуется: "БЮРО ПО УСТАНОВЛЕНИЮ ПОТЕРЬ АРМЯНСКОГО НАРОДА ОТ ВСЕМИРНОЙ ВОЙНЫ ".

В задачи БЮРО входит установление потерь людьми,разрушение культурных и исторических памятников, разрушение городов, сел и деревень, насилий над личностью, грабежей, поджогов, убийств, разрушений и приостановки торговых, фабричных, заводских и промышленных предприятий, уничтожение и потрава посевов, садов, огородов, увоз всякого рода и вида имущества и предметов производства и всякого рода насилий над людьми и вообще установление ущерба армян от действий турко-татарских войск и банд.

2) БЮРО имеет следующие четыре отдела:

1. Историко-политический,
2. Экономический,
3. Следственно-уголовный,
4. Военно-исторический.

Задачи первого отдела — историко-политического — изложить политическую историю армянского вопроса во всех стадиях его развития, доведши его до наших дней.

Задачи второго отдела — экономического — подробно выяснить через уполномоченных, их помощников и инструкторов размер убытков и потерь, причиненных армянскому народу всемирной войной, путем местного обследования.

Задачи третьего отдела — следственно-уголовного — установить через особые следственные комиссии с участием следователей факты тех ужасов и насилий, коим подвергались армяне за время этой войны и особенно за время турецкого вторжения в пределы Закавказья.

Наконец задачи четвертого отдела — военно-исторического — подробно изложить историю участия армянских военных сил и вообще армянского народа в последней войне и выяснить значение этого участия с точки зрения военной, стратегической и политической.

3) Во главе каждого отдела стоит один из членов БЮРО, который и ведет все дело организации своего отдела под своей личной ответственностью перед БЮРО.

4) Вопросы принципиального характера, а также и организационные вносятся на рассмотрение БЮРО и осуществляется после решения БЮРО.

5) Кроме указанных четырех членов БЮРО в состав его входят: а)председатель союза союзов землячеств в качестве: председателя БЮРО, б) один представитель от торговцев и промышленников, финансирующих дело БЮРО, в) один представитель Правительства Республики Армении exofficio и г) один (пятый) член, заведующий всей канцелярией и делопроизводством БЮРО по приглашению последнего.

6) Члены, заведующие отделами, приглашают для ведения дел отделов ближайших помощников и уполномоченных, кои намечаются ими и приглашаются по утверждению их постановлением БЮРО.

7) Остальных служащих, помощников, уполномоченных, инструкторов и пр. сотрудников приглашают сами члены БЮРО.

8) Все дело БЮРО должно быть окончено в течение трех месяцев, на каковой срок и приглашаются все служащие БЮРО.

9) Предварительно начатие работ каждый заведывающий отделом представляет подробную смету расходов по своему отделу и личный штат на рассмотрение и утверждение БЮРО.

10) Все расходы производятся по постановлению БЮРО по ордерам в кассу, подписанным председателем БЮРО или его заместителем и секретарем БЮРО.

11) На предварительные расходы отпускаются каждому из членов БЮРО под отчет аванс в размере и по установлению БЮРО. По израсходовании этого аванса и по представлении отчета за подписью члена Бюро аванс может быть восстановлен.

12) Все отчеты от отделов за скрепой члена БЮРО поступают через общую канцелярию к финансовому агенту на предмет разноски по книгам.

13) Порядок представления отчетов уполномоченными будет установлен особой инструкцией, которая и будет сообщена им для руководства.

ЦГИА РА, ф.221, оп.1, д. 31, л. 37—38. Отпуск. Машинопись.

№ 9

<Конец 1918 г.>

БЮРО
ПО УСТАНОВЛЕНИЮ
ПОТЕРЬ АРМЯН
ОТ
ВСЕМИРНОЙ ВОЙНЫ

ИНСТРУКЦИЯ

1) Бюро принимает на себя через своих уполномоченных: а) составление точной описи и оценку всего имущества и всех товаров, награбленных турецкими войсками и оставленных на месте по требованию

Союзного Командования; б) организация охраны всего этого имущества; в) выяснение того, кому оно принадлежало, путем опроса потерпевших, заявляющих на это имущество свои претензии, проверка их показаний тем способом, который Бюро и его уполномоченные найдут целесообразным и г) возвращение этого имущества и товаров их собственникам.

2) Для выполнения этой задачи Бюро командирует на место своих представителей, которые действуют от имени Бюро на основании его указаний и инструкций и пользуются содействием со стороны местных властей и представителей Союзного Командования. О своем прибытии на место представители Бюро сообщают местным властям и представителям Союзных Миссий.

3) По прибытии на место, где окажется упомянутое выше имущество, представители должны принять его от местных властей по описи, если таковые уже были составлены местными властями с предварительной ее проверкой, или составить при участии местных властей полную опись этого имущества, как в количественном отношении, так равно с кратким описанием того состояния, в котором оно окажется при приеме, при чем опись эта должна быть подписана как представителем Бюро, так и представителем местных властей.

4) В описи надлежит указывать те или иные отличительные, фабричные и иные знаки или номера, а если таковые на принимаемых предметах окажутся и вообще все те признаки, по которым возможно было бы облегчить установление принадлежности описываемых предметов.

5) Одновременно с составлением описи принимаемого имущества представители Бюро устанавливают охрану этого имущества от дальнейшего расхищения и порчи (устанавливается ответственная стража, предметы сосредотачиваются в крытых или огороженных помещениях, закрываются брезентом и т.д.).

6) Представители Бюро принимают письменные заявления лиц и учреждений о розыске и возврате им похищенного у них имущества, при чем в этих заявлениях потерпевшие должны подробно описать предметы, которые у них были расхищены с указанием их характерных примет. Такого рода претензии должны быть удостоверены сельскими или уездными властями, домовыми комитетами по принадлежности или выписками из торговых или товарных книг.

7) Все составленные описи и оценка с точным указанием местонахождения имущества и поступающие заявления должны препровождаться в Бюро, при чем заявления должны сопровождаться заключением представителей Бюро относительно достоверности изложенных в заявлениях претензий.

8) Все принимаемое имущество должно быть застраховано от огня в одном из страховых обществ в полной стоимости.

9) Представители Бюро составляют и представляют в Бюро сметы расходов по организации охраны, оценке, хранению и страхованию всего принятого имущества.

10) Предметы, подвергающиеся порче, могут быть проданы с торгов по распоряжению представителя Бюро с соблюдением правил торгового производства, установленных для казенных торгов.

11) Реализация всех прочих предметов путем продажи производится не иначе как по распоряжению Бюро.

12) Для облегчения хранения принятого имущества оно может быть свезено из различных мест в один центральный пункт и сосредоточено в одном помещении.

13) Наем помещения и стражи производятся представителем Бюро по мере надобности и по своему усмотрению.

14) Командируемые в Карсскую область представители действуют во всем совместно и с общего взаимного согласия и во всех своих действиях несут общую коллективную ответственность.

15) Во всех своих действиях представители отчитываются перед Бюро.

16) Оценка принимаемого имущества должна быть произведена по ценам довоенного времени.

ЦГИА РА, ф. 221, оп.1, д. 38, л. 1-2. Отпуск. Машинопись. Черновик.

№ 10

Արձանագրություն
Հայրենակցական միությունների վարչությունների
24 նոյեմբերի 1918 թվի ընդհանուր ժողովի

Ժողովը բացվում է նախագահությամբ Հ. Թումանյանի և մասնակցությամբ Ղարաբաղի, Ախալքալաքի, Փամբակի, Ղարսի, Լոռու, Գողթնի, Նոր-Բայազետի, Շամախու և Գեոկչայի, Ղազախի և Գանձակի հայրենակցական միությունների վարչությունների 30-ից ավելի ներկայացուցիչների: Քարտուղար Հ. Համբարձումյանի հիվանդության պատճառով նրա պարտականությունները կատարում է Պ. Աբելյանը:

1. Ժողովը հոտնկայս հարգում է իր անդամ և մանկավարժ Թադ. Խզմալյանի հիշատակը, որ վախճանվել է մոտ օրերս:

2. Հ. Թումանյանը զեկուցում է այն բյուրոյի մասին, որ կազմել է Հայրենակցությունների միությունների խորհուրդը՝ հաշտության համաժողովին ներկայացվելիք հուշադրի համար ստուգված նյութեր հավաքելու և մշակելու նպատակով: Այդ նպատակը բյուրոն իրագործում է՝ ցուցակագրելով և սիստեմի վերածելով այն բոլոր փաստերը, որ կարող են տալ հայ ժողովրդի իր դեմ միասին գործող տաճկական և Ատրպատականի

---

* *Այս կետը գրված է 15-ից փոքր ինչ հեռու՝ ձեռագրով:*

պետությունների կողմից կրած նյութական վնասների և բռնությունների ամբողջական պատկերը: Բյուրոն առայժմ գործում է Հայրենակցական միությունների խորհրդի ընդհանուր ղեկավարությամբ: Քայլեր են արված, որ նա ճանաչվի հայոց կառավարության կողմից: Բյուրոյի գործունեության շրջանը, գոնե առայժմ, Ռուսահայաստանը, Պարսկահայաստանը և Հյուսիսային Կովկասն են,– Տաճկահայաստանը դեռևս չի մտնում նրա գործունեության շրջանի մեջ: Բյուրոն իր գործը կատարելու համար իրեն ենթակա վայրերը բաժանել է 16 շրջանի, որոնցից յուրաքանչյուրը կունենա իր առանձին վարիչը իր օգնականներով: Բյուրոն բաժանվում է հետևյալ մասերի. ա) պատմաքաղաքականի, բ) զինվորականի, դ) տնտեսականի և գ) քրեականի: Առաջին, պատմաքաղաքական բաժնի համար հրավիրված է Լեոն, զինվորական բաժինը մինչև հարմար վարիչ գտնելը ժամանակավոր մի քանի զինվորականների հետ միասին կառավարում է Տիգ. Բեդզագյանը, տնտեսական բաժնի վարիչն է Քրիստ. Վերմիշյան, քրեականինը՝ Տիգ. Հովհաննիսյան: Բյուրոյի նախագահն է Հով. Թումանյան, իսկ քարտուղարը Կորյուն Ղաղաղյան: Բյուրոյի նիստերին մասնակցում է և հայոց կառավարության դիվանագիտական միսսիայի ներկայացուցիչ Ջամալյանը: Քրեական մասը գավառներում կազմակերպելու համար հրավիրում են հմուտ և դատաստանական ասպարեզում գործած մասնագետ իրավաբաններ, ռուսներ: Ենթադրվում է, որ այս գործը կպահանջի կես միլիոնից ոչ պակաս գումար: Հայոց կառավարությունը հանձինս մի քանի օր առաջ Թիֆլիսում գտնված նախարարների հույս է տալիս, որ այդ ծախսի մեծ մասը իր վրա կվերցնի: Մյուս մասը խոստանում են տալ վաճառականները, որոնք գրա համար կազմել են առանձին ֆինանսական հանձնաժողով, որի գանձապահը, գործը հեշտացնելու համար, մտնում է Բյուրոյի մեջ: 20 հոգի <1 անընթ.> վաճառականներ առայժմ խոստացել են սկզբնական ծախսերի համար տալ չորս հազարական ռուբլի: Բյուրոն արդեն սկսել է գործել: Փամբակի և Լոռու հայրենակցությունների ներկայացուցիչները նոյեմբերի 25-ին, երեկ. ժ. 6-ին հրավիրվում են Առևտրական բանկը այդ գավառների վնասների և կրած բռնությունների ցուցակագրումը կազմակերպելու համար: Նույն ժամին նույն տեղը հրավիրվում են նաև Աշ. Աթանասյանը և Պ. Աբելյանը բյուրոյի հետ խորհրդակցելու Ախալքալաքի և այլ գավառներում գործը կազմակերպելու համար: Ժողովը հավանություն տվեց այն բոլոր քայլերին, որ Հայրենակցությունների կենտրոնական խորհուրդը արել է այս գործը գլուխ բերելու նպատակով:

3. Թումանյանը հայտնեց, որ հայոց կառավարության դիվանագիտական միսսիան դիմել է գաշնակից պետությունների ներկայացուցիչներին՝ հայ ժողովրդի թալանի առաջն առնելու խնդրով: Տաճիկների առաջ ճանապարհը փակված է Բաթումի, Ջուլֆայի կողմից, բաց է մնում միայն Էրզրումի ճանապարհը, որով և տանում են թալանը: Տաճիկները հայ ժողովրդից թալանած գույքի մի մասն էլ աշխատում են տալ Ատրպատականի կ<առավարութ>յան, իբրև նրա սեփականություն: Խնդրվել է թե այդ բանի առաջն առնել և թե արգելել Էրզրումի ճանապարհով դուրս տանել սոված հայ ժողովրդի գույքի մնացորդը:

4. Թումանյանը առաջարկեց ժողովին խորհրդի կողմից դիմել դաշնակիցների ներկայացուցիչներին և խնդրել, որ նախ չուտափույթ տաճկական զորքերը հանվեն հայկական գավառներից, երկրորդ թալանին վերջ տրվի և երրորդ հայ ժողովրդին հնարավորություն տրվի սովից փրկվելու և իր քայքայված տնտեսությունը վերականգնելու: Աբելյանը հայտնեց, որ ինքը, միությունների կենտրոնական խորհրդի հանձնարարությամբ, Աբ. Տեր-Հակոբյանի և Խաչ. Բզնունու հետ միասին այդ գործով մի քանի օր առաջ եղան Ջամալյանի մոտ և ծանոթացան Ջամալյանի դիմումին: Այդ դիմումը հեռագրի համար է եղել և անհարմար է հայրենակցությունների գրավոր դիմումի համար, որ պետք է ավելի ընդարձակ լինի և գաղափար տա յուրաքանչյուր հայ գավառի համար ստեղծված վիճակի մասին: Որոշվեց պետությունների ներկայացուցիչներին այդպիսի խնդրով դիմել: Վճռվեց հանձնարարել վարչություններին, որ ամենաուշը մինչև նոյեմբերի 26-ի երեկոն համառոտ տեղեկություններ հաղորդել իրենց գավառների մասին: Խոստացան մինչև այդ օրը տեղեկություններ բերել. ա) Ղարաբաղի հայրենակցության կողմից– Լեո. բ) Ախալքալաքի–Աբելյան, գ) Փամբակի–Ատ. Զորյան, դ) Ղարսի նահանգի հայրենակցության կողմից–Խաչ. Բզնունի, ե) Լոռու–Ս. Աբովյան, զ) Գողթնի–Հ. Պետրոսյան, է) Շամախու և Գեոկչայի–Զաքարյան, ը) Ղազախի–Ալ. Տեր-Բարսեղյան, թ) Գանձակի–Հով., ժ) Ախալցխայի, Ալեքսանդրապոլի և Ն.–Նախիջևանի հայրենակցություններին հանձն առան այս մասին հայտնել Գ. Պապոյան և Ա. Տեր-Հակոբյան, ժա) Արեշ և Նուխվա հայրենակցություններին կհայտնի Զաքարյան, ժբ) Արգանուչի և Օլթու հայության մասին տեղեկություններ կտա Ախալք<ալաքի> հայրենակցությունը: Հայրենակցություններ չունեցող գավառների մասին խորհուրդը տեղեկություններ պետք է հավաքի և մտցնի դիմումի մեջ:...

Ի տեղի քարտուղարի Պ. Արելյան

ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 244, ց. 1, գ. 4, թ. 83–84: Բնագիր: Ձեռագիր:

№ 11

10 декабря <1918 г.>

Гражданину Давиду Ивановичу Ананову
М. Г.

Согласно нашим личным переговорам настоящим "Бюро по установлению потерь <армян> от всемирной войны" извещает Вас, что Вы назначены его уполномоченным для обследования материальных потерь армянского населения в Карабахе (Шушинском и Джеванширском уездах).

При исполнении возложенной на Вас работы Вам предоставляется приглашать помощников по своему усмотрению, руководствуясь, одна-

ко, при назначении им вознаграждения теми максимальными нормами, которые установлены нашим постановлением от 22 ноября 1918 г.

При производстве возложенных на Вас работ Вы имеете руководствоваться особой инструкцией, приложенной к сему письму и группировать все собираемые сведения в бланках анкетных карточек и ведомостей, которые Вы имеете получить от Бюро вместе с настоящим письмом.

Условия Вашего вознаграждения и вознаграждения Ваших помощников и размеры суммы, назначенной в Ваше распоряжение на все Ваши расходы, изложены в протокольном постановлении Бюро и будут Вам сообщены канцелярией Бюро.

В виду того, что в Вашем районе работы предвидится сравнительно не много, так как этот район не подвергся нашествию турок, то мы рассчитываем, что обследование потерь в означенном районе будет Вами докончено в месячный срок. По истечении этого срока мы надеемся, что Вы не откажете продолжать Вашу работу в нашем Бюро в одном из отделов его по соглашению с нами.

Председатель Бюро <Ов. Туманян>
Заведующий экономич. отделом <Аш. Атанасян>

ЦГИА РА, ф. 221,оп. 1, д.38, л. 14. Отпуск. Рукопись.

№ 12

11 դեկտ<եմբերի> 1918 թ.
№ 18

Հարգելի պ. Լևոն Սարգսյան!

Տեղումս Հայոց Կառավարության համաձայնությամբ և Հայրենակցական Միությունների ձեռներեցությամբ կազմվել է մի Հանձնաժողով, որը զբաղվում է այս պատերազմից հայ ժողովրդի վնասները որոշելու գործով:

Մեզ հաստատ աղբյուրներից հաղորդեցին, որ դուք Ալեքսանդրապոլ քաղաքի և գավառի համար պատրաստել եք նյութեր. ի նկատի ունենալով, որ մեր նպատակները մի են, մենք ուղարկում ենք Ձեզ մեր բլանկներից որպես օրինակ և խնդրում ենք Ձեզ հայտնել կարող եք արդյոք դուք տեղումդ կազմակերպել այս գործը համաձայն մեր ծրագրի թե քաղաքում և թե գավառում. թե գուցե Ձեր կազմած մասնաժողովի աշխատանքները ավելորդ են դարձնում մեր կողմից նոր աշխատանք սկսելու:

Այս մասին բարի եղեք հաղորդել մեզ հետևյալ հասցեով Тифлис — Вознесенская ул. №2 в Бюро по убыткам.

Հարգանքներով *Հ. Թումանյան*
Վերմիշյան

ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 221, ց. 1, դ. 38, թ. 13: Թողոն: Ձեռագիր:

№ 13

Эривань
Министру Председателю

Бюро по установлению потерь армян от всемирной войны выяснило, что для установления этих миллиардных потерь в короткий трехмесячный срок необходимо безотлагательно развергнуть одновременно все отделы Бюро с большим числом сотрудников, ведя работу <с> исключительным напряжением. Это требует предоставления распоряжения Бюро сразу больших средств, между тем как финансовая помощь общества только организуется. Ввиду этого Бюро обращается к Вам <с> покорнейшей просьбой ускорить ассигнование парламентом испрошенной суммы до трехсот тысяч. О решении благоволите телеграфировать.

Председатель Бюро Ов. Туманян

11. XII. <19>18 г. Тифлис.

ЦГИА РА, ф.221, оп. 1, д. 31, л. 23. Копия. Рукопись.

№ 14

№ 19
13 գեկտ<եմբերի, 1918 թ.>

Հարգելի պ. Գրաֆելիա
Գեորգ Փարսադանյան

Հայաստանի Կառավարության համաձայնությամբ և Հայրենակցական Միությունների ձեռներեցությամբ ձեռնարկել է ներկա պատերազմի հայ ժողովրդի կրած վնասների ցուցակագրության գործին :

Ձեզ որպես Երևանի նահանգին ծանոթ անձի և գյուղատնտեսի առաջարկվում է լինել Հանձնաժողովի լիազորը Երևանի շրջանում ղեկավարելու և կազմակերպելու այդ գործը տեղում: Եթե համաձայն եք ստանձնել ձեզ վրա այդ գործը, բարի եղեք գալ այստեղ պայմանավորվելու և ծանոթանալու գործի հետ: Ձեր գալը պետք է որչափ կարելի է արագացնել քանի որ մեր տրամագրության տակ շատ քիչ ժամանակ կա:

Հարգանքներով ի տ. կառավարչի
տնտեսական մասի՝ Ա. Աթանասյան

ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 221, ց. 1, գ. 38, թ. 18: Պատճեն: Ձեռագիր:

* *Այսպես է բնագրում:*

№ 15

ՔՆՆԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ՀԱՄԱՇԽԱՐՀ<ԱՅԻՆ> ՊԱՏԵՐԱԶՄԻՑ
ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԿՐԱԾ
ՎՆԱՍՆԵՐԻ

Հարգելի բժիշկ <Սարգիս Փիրումյան>*

20 դեկտեմբերի 1918 թ.
№ 24
Թիֆլիս

Հայաստանի Հանրապետության կառավարության հավանությամբ և աջակցությամբ Թիֆլիսում կազմվել է մի Քննիչ Հանձնաժողով, որը պիտի շատ կարճ ժամանակամիջոցում պարզի համաշխարհային պատերազմից հայ ժողովրդի կրած ամեն տեսակի վնասները – Եվրոպայում կազմվելիք Վեհաժողովին ներկայացնելու համար:

Հանձնաժողովս հաստատ աղբյուրից տեղեկացավ, որ Դուք կազմել եք Դիլիջանում տեղի ունեցած ավերածությունների և սխրագործությունների պատկերը և ունիք կարևոր լուսանկարներ:

Հանձնաժողովս հատուկ խնդրում է Ձեզ չմերժել Ձեր կազմած բոլոր նյութերը և մանավանդ լուսանկարները ուղարկել իրեն, որոնցից օգտվելուց անմիջապես կվերադարձվեն Ձեզ:

Հանձնաժողովիս հասցեն՝
Тифлис, Вознесенская, 2, Бюро
по установлению потерь армян от всемирной войны.

Նախագահ՝ Հ. Թումանյան
Ի տ. Քարտուղարի՝ Մ. Տեր-Գրիգորյան

ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 221, ց. 1, դ. 38, թ. 25: Թողոն: Ձեռագիր:

№ 16

10 января 1919 г.
№ 1782

УДОСТОВЕРЕНИЕ

Дано сие Ованесу ТУМАНЯНУ в том, что генерал-губернатор гор. Тифлиса и его окрестностей разрешил ему возобновить действия бюро по установлению потерь армян от всемирной войны и турецкого нашествия, помещающееся на Вознесенской ул. в доме под N18, что подписью и приложением печати удостоверяется.

Управляющий канцелярией (подпись)
Делопроизводитель (подпись)

ЦГИА РА, ф. 221, оп. 1, д. 38, л. 27; 28. Копия. Машинопись.

* Լուսանցքում գրված է. «Բժիշկ Սարգիս Փիրումյանին»:

№ 17

29 հունվ<արի> 1919 թ.
№ 28 «Աշխատավորի» խմբագրությանը

Մեծարգո պ-ն,

Համաշխարհային պատերազմից հայ ժողովրդի կրած վնասների քննիչ հանձնաժողովը որոշել է պատրաստել զինվորա-պատմական տեսություն՝ «Հայոց մասնակցությունը 1914–1918 թ<թ.> համաշխարհային պատերազմին» վերնագրով: Այդ աշխատանքը հանձնված է հատուկ զինվորա-պատմական մասնախմբին, գեն. Կուլեբյակինի նախագահությամբ: Հիշյալ տեսությունը պետք է ներկայացվի Փարիզի Հաշտության կոնֆերանսին և պատրաստ լինի մինչև մարտ ամիսը:

Արդ, խնդրում ենք չմերժել հանձնել մեզ, հիշյալ զինվորա-պատմական մասնախմբին մշակելու համար Ձեր ունեցած գրավոր նյութերը, որոնք կվերաբերվեն հայերի զինվորական մասնակցությանը համաշխարհային պատերազմին, սկսած նրա առաջին (կամավորական) շրջանից մինչև մեր կորպուսի վերջին կռիվները Թուրքերի դեմ (թղթակցություններ, նամակներ, հրամաններ, զեկուցումներ, հիշատակարաններ ևն):

Այդ Ձեր գրավոր նյութերը, եթե կամենաք, կարող են նորից վերադարձնել Ձեզ օգտվելուց հետո, կամ կմնան հատուկ հայկական զինվորա-պատմական արխիվի մեջ, մնացած նման նյութերի հետ:

Հավատացած լինելով, որ Դուք չեք մերժի Ձեր ունեցած գրավոր նյութերով օգնության գալ մեր ձեռնարկած աշխատանքին, մնամ

Ի տ. նախագահի
քննիչ հանձնաժողովի Տիգր. Բեգզադյան

ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 221, ց. 1, գ. 38, թ. 44: Պատճեն: Ձեռագիր:

№ 18

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐ
№ 183
3 փետրվարի 1919 թ.
Երևան

ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՄԻՍՍԻԱՅԻՆ ԹԻՖԼԻՍՈՒՄ

Ամիսներ առաջ գրագրություն կար Թիֆլիսում մի մարմին կազմակերպելու մասին մեր Հանրապետության և հայ ժողովրդի կրած վնասները, տված զոհերը ստուգելու և արձանագրելու համար: Կառավարության միջնորդությամբ Խորհրդարանը հատկացրեց 20000 ռ. այդ նպատակի համար:

Պ. Մ. Հարությունյանը այժմ խնդրում է շտապեցնել Կառավարության այդ աջակցությունը: Թիֆլիս գալող Պ. Պ. Մինիստրների հետ ուղարկվեց

մեր ֆինանսական դործակալի անունով 20000 ռ. ասիգնովկան հիշյալ դործով աշխատող Բյուրոյին հանձնելու համար (այդ մասին դրվեց 25–1, 121 Պ. ֆինանսական դործակալին):

Դժբախտաբար մեզ ոչինչ հայտնի չէ այդ Բյուրոյի դործունեության մասին: Մասնավոր աղբյուրից իմանում ենք, որ Բյուրոն աշխատում է, որ ունի բլանկ "Бюро по установлению потерь Армян от всемирной войны" և հասցեն է Թիֆլիս, Վողնեսենսկայա 2:

Մեզ համար հետաքրքրական է և կարևոր է ունենալ մանրամասն տեղեկություններ, թե ինչպես է կազմակերպված Բյուրոյի դործավարությունը և մանավանդ վնասների քննությունը. ինչ չափով է համապատասխանում դործը ընդհանուր դատական և միջազդային–իրավական պահանջներին. արդյոք Բյուրոն անմիջապես կամ որևէ ուրիշ հաստատության միջոցով որևէ հարաբերություն ունեցել է որևէ այլ պետության հետ թե Անդրկովկասյան, թե Եվրոպական և Ամերիկական, ինչպես և Թուրքիայի հետ. ինչ է ծրագրում և ինչ է դործում Բյուրոն այս դործի հետագա վարման, ինչպես և հատուցում ստանալու մեր դատը իրականացնելու–ճանապարհների, միջոցների և եղանակների մասին. այս ուղղությամբ կատարվել է արդյոք որևէ ուսումնասիրություն և պաշտոնական բանակցություն:

Արտաքին դործերի մինիստր Ս. ՏԻԳՐԱՆՅԱՆ
Դիվանապետ Ս. ՄՈՒՇԵՂՅԱՆ

ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 221, ց. 1, դ. 31, թ. 15: Պատճեն: Մեքենադիր:

№ 19

Համաշխարհային պատերազմից հայ ժողովրդի
կրած վնասների Քննիչ Հանձնաժողովի պ. նախագահին

Ներկայացնելով Ձեզ իմ աշխատակիցներից մեկի՝ նախկին դատախազի օդնական պ. Լո<ն>դինովի ղեկուցադիրը *, իմ կողմից հարկ եմ համարում ավելացնել հետևյալը:

Հանձնաժողովի այն բաժինը, որ ես եմ վարում, նպատակ ունի՝ ամեն մի անաչառ դատավորի համար համոդիչ փաստերով հաստատել համաշխարհային պատերազմի ընթացքում տաճիկների ու թուրքերի կողմից հայ ժողովրդի և առանձնապես ռուսահայության վրա դործ դրած ոճրությունները և ապացուցանել ջարդերի ծրադրված լինելը:

Մինչև մեր Հանձնաժողովի դոյությունը՝ այդ նպատակով լուրջ բան արված էր, որքան մեզ հայտնի է, միմիայն օտարների ձեռքով (լորդ Բրայսի և դոկտոր Շտյուրմերի դրքերը), եթե չհաշվենք Բաքվի Հայկական Բյուրոյին կից «Վչտապատում» կոչված մասնաժողովը, որի նախադահը լինելու պատիվն ունեի ես:

---

* Տե՛ս Հ ր. Ա վ ե տ ի ս յ ա ն. Հայոց ազդային միասնության հաղթանակը. 1918 թվականի մայիս. Երևան, 1998, էջ 269–272:

Սակայն այդ բոլորն արված է մինչև 1918 թիվը, երբ տաճիկները դեռ չէին կարողացել իրենց ջարդարար գործունեությունը լայն չափով արծարծել Անդրկովկասում: Բացի այդ, լորդ Բրայսի գիրքը ընդգրկում է գեպքերը պատերազմի սկզբից մինչև 1916 թվի կեսը, իսկ դոկտոր Շտյուրմերի գիրքը մինչև նույն թվի վերջը (և պարունակում է գլխավորապես հեղինակի անհատական դիտողությունները): Ինչ վերաբերում է «Վշտապատումին», նրա հավաքած նյութերի մեջ կան շատ արժեքավոր փաստեր և աշխատություններ (որ մեր բաժինը օգտագործելու է), սակայն այդ նյութերը քաղված են հայ աղբյուրներից և հայ աշխատակիցների միջոցով և վերաբերում են 1914–1917 թվերին:

Մինչդեռ մեր հանձնաժողովը սկզբից ևեթ որոշել է, նախ, նյութեր հավաքել գլխավորապես այն բռնությունների մասին, որ տաճիկները և նրանց օրիենտացիային հետևող անդրկովկասյան թուրքերը գործ են դրել ռուսահայության վրա. երկրորդ, նյութեր հավաքել ռուս փորձառու քննիչների միջոցով. երրորդ, ըստ կարելոյն այդ բռնությունների փաստը և նրանց վերաբերմամբ հայ մարդկանց տված ցուցմունքները հաստատել օտարազգիների վկայությամբ, և չորրորդ, լրացնել այն պատկերը, որ տաճկահայության կրած տանջանքների նկատմամբ տվել է լորդ Բրայսի գիրքը:

Այդ գործը ահագին նշանակություն ունի նախ և առաջ իհարկե խաղաղության վեհաժողովի համար, որպեսզի մեր պատվիրակները կարողանան անվիճելի կերպով ապացուցանել տաճիկների ու թուրքերի մեղավորությունը, հերքել հայերի վրա բարդվող մեղադրանքները և հաջողեցնել, որ վեհաժողովը հայ ժողովրդի կրած նյութական վնասների պատասխանատվությունը դնի տաճիկ կառավարության վրա: Այնուհետև այդ գործը անհրաժեշտ է այն տեսակետից, որ տաճկական քաղաքականությունը, թեև դիմակավորված, բայց դեռ շարունակվում է և դժբախտաբար մոտավոր ապագայում էլ պիտի շարունակվի Անդրկովկասում, իսկ այդ քաղաքականության դեմ պայքարելու ամենալավ միջոցն է ճշդրիտ փաստերով հաստատել նրա աղետաբեր հետևանքները: Վերջապես այդ գործն ունի նաև մեծ պատմական նշանակություն, որ չի կարող չընդունել ոչ մի պետական դործիչ:

Ինձ հանձնված բաժինը մինչև այժմ լրիվ վերջացրած կլիներ այդ գործը, եթե չլիներին հետևյալ խանգարիչ հանգամանքները:

Նախ, Հանձնաժողովի գրամական սուղ վիճակը, որի շնորհիվ ես ստիպված եմ եղել ծրագրված տասնևութ քննիչի փոխարեն հրավիրել միայն երկու քննիչ:

Երկրորդ. Ադրբեջանի իրավասության տակ գտնված վայրերում, բացի Բաքվից, անհնար էր որևէ հետազոտություն կատարել մեր քննիչների միջոցով: Ինչ վերաբերում է Բաքվին, այնտեղ կազմակերպվել է առանձին, տեղական Անկետային Մասնաժողով (թեև մի քիչ տարբեր բնույթով ու ծրագրով), որի հետ մենք սկզբից ևեթ հարաբերության մեջ ենք մտել և որի աշխատանքների արդյունքը օգտագործելու համար չուտով կամ մեզանից մեկը կերթա Բաքու կամ այնտեղից մեկին կհրավիրենք:

Երրորդ խանգարիչ հանգամանքը հայ-վրացական պատերազմն էր, որ բավական դանդաղեցրեց ամբողջ Հանձնաժողովի և մասամբ մեր բաժնի գործունեությունը:

Այնուամենայնիվ ինչքան կարելի էր անել այդ աննպաստ պայմաններում ինձ հանձնված բաժինը արել է:

Նախ և առաջ, այն երկու քննիչը, որ ես հնարավորություն ունեի հրավիրելու, հավաքել են բավական մեծ քանակությամբ և որ գլխավորն է հավաստիության բոլոր երաշխիքներ ունեցող ցուցմունքներ, փաստաթղթեր և լուսանկարներ: Կան շրջաններ, ինչպես Ղարաքիլիսայի, Լոռվա և Նուխու-Արեշի շրջանները, որոնց նկատմամբ գրեթե սպառիչ նյութեր են հավաքված: Երկու քննիչն էլ (Լո<ն>դինով և Գավրիլով) ցույց տվին ոչ միայն մեծ հմտություն քննական գործում, այլև աչքի ընկնող բարեխղճություն (նույնիսկ երեկոները աշխատում էին և դնում էին վկաներին իրենց բնակարաններում հարցաքննում):

Երբ մեր Հանձնաժողովի արխիվային նյութեր հավաքող բաժնից ստանամ թերթերում պարունակված նյութերը և Բաքվից տեղական Անկետային Մասնաժողովի ու «Վշտապատումի» նյութերը, իսկույն կսկսեմ կազմել մի աշխատություն, որի առաջին մասը ամփոփ կերպով կպարունակի այն բոլոր ոճիրները, ինչ որ տաճիկները գործել են ռուսահայության նկատմամբ 1918 թ., իսկ երկրորդ մասը կտա տաճկահայերի կրած տառապանքների լրացուցիչ պատկերը:

Անձամբ ես բացի իմ բաժինը ղեկավարելուց ուսումնասիրել եմ հայկական վերջին ջարդերին վերաբերող գրականությունը և պատրաստել «Տաճիկ կառավարությունը և իթթիհատը մարդկության դատարանի առաջ» վերնագրով մի աշխատություն, որի նպատակն է հերքել տաճիկ կառավարության և իթթիհատի արգարությունը և հայ ժողովրդի մեղավորությունը փաստաբանող երկու գրքերի բովանդակությունը:

Այդ աշխատությունս պատրաստված էր այն նպատակով, որ մեր Հանձնաժողովի ծախքով տպվեր հայերեն, ռուսերեն և ֆրանսերեն, բայց Հանձնաժողովի նյութական սուղ վիճակը ի նկատի ունենալով ես սկսեցի այդ աշխատությունը տպել «Հառաջ» թերթում*:

Քննիչներից մեկի պ. Լո<ն>գինովի հավաքած նյութերի մի հատորի պատճենը արդեն հանձնել եմ պ. Պապաջանյանին Փարիզ տանելու համար, երկրորդ հատորն էլ այս երկու օրս կհանձնեմ, իսկ հետևյալ հատորներն ու մյուս քննիչ Գավրիլովի հավաքած նյութերի պատճենները հետզհետե կուղարկեմ Փարիզ մեր պատվիրակությանը նրա սուրհանդակների ձեռքով:

Քրեական բաժնի վարիչ՝ Տ. Հովհաննիսյան

8 փետրվարի
1919 թվի

ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 221, ց. 1, գ. 143, թ. 25–26: Վավերացված պատճեն: Ձեռագիր:

---

* Տե՛ս «Հառաջ», Թիֆլիս, 5 փետրվարի 1919, 9 փետրվարի 1919, 19 փետրվարի 1919, 6 մարտի 1919, 7 մարտի 1919:

№ 20

ՔՆՆԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ՀԱՄԱՇԽԱՐՀ<ԱՅԻՆ> ՊԱՏԵՐԱԶՄԻՑ
ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԿՐԱՏ
ՎՆԱՍՆԵՐԻ
21 փետրվարի 1919թ.
№ 60

Իշխանուհի
Ելենա Նիկոլայևնա
Արղությանին

Իշխանուհի

Օգտվելով Ձեր շատ սիրալիր պատրաստակամությունից օգնել Հանձնաժողովիս, որի մասին մեզ տեղեկացրել է իշխան Բորիս Նիկոլայևիչը – Քննիչ Հանձնաժողովս ուղարկում է Ձեզ Կապույտ Գրքի մի օրինակը, խնդրելով Ձեր ժրաջան աշխատանքը նշանակված հոդվածները հայերեն կամ ռուսերեն թարգմանելու համար:

Կանխապես հայտնելով Ձեզ մեր սրտագին շնորհակալությունը, խնդրում եմ ընդունեք, իշխանուհի, խորին հարգանաց հավաստիքը:

Նախագահ՝ Հ. Թումանյան

ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 221, ց. 1, գ. 38, թ. 71: Վավերացված պատճեն:Ձեռագիր:

№ 21

Արձանագրություն

1919 թիվ, մարտի 22.

Կայացավ Հովհաննես Թումանյանի նախագահությամբ Հայր<ենակցական> Միութ<յունների> կենտ<րոնական> խորհրդի գործադիր մարմնի և քննիչ բյուրոյի երկրորդ խառն ժողովը, որին ներկա էին – բյուրոյի վարիչներ – գեներալ Կուլեբյակին, Լեո, Տ. Հովհաննիսյան և Աշ. Աթանասյան.– գործադիր մարմնի անդամներ – Մ. Գարբինյան, Արամ Տեր–Գրիգորյան, Գ. Սահակյան և Հ. Համբարձումյան:

Ժողովը լսեց. 1) Նախագահի զեկուցումը դրամական հաշիվների և ստացված ու ծախսված գումարների մասին, 2) պ. Լեոյի զեկուցագիրը հիշատակագրի պատմական մասի վերաբերմամբ, 3) գեներալ Կուլեբյակինի զեկուցագիրը զինվորական մասի վերաբերմամբ, 4) Տիգրան Հովհաննիսյանի զեկուցագիրը քրեական բաժնի մասին և 5) Աշ. Աթանասյանի զեկուցումը տնտեսական բաժնի մասին:

Մտքերի փոխանակությունից հետո ժողովը որոշեց.

Հանձնարարել Բյուրոյի անդամ Տիգրան Հովհաննիսյանին և գործադիր մարմնի անդամ Հ. Համբարձումյանին՝ համաձայն վերոհիշյալ զեկուցագրերի ներկայացնել Հայր<ենակցական> Միությունների կենտրոնական

խորհրդին՝ նորա առաջիկա նիստին զեկուցումներ Բյուրոյի գործունեության մասին, որի հետ միասին առաջարկել նույն խորհրդի քննությանը Բյուրոյի գործունեության պայմանաժամը երկարացնելու խնդիրը:

Նախագահ՝ Հ. Թումանյան
Քարտուղար՝ Հ. Համբարձումյան

ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 244, ց. 1, գ. 15, թ. 13: Բնագիր: Ձեռագիր:

№ 22

Հայրենակցական Միությունների
Կենտրոնական Խորհրդին

Զեկուցագիր

Ի լրումն այն զեկուցագրի, որ այս տարվա փետրվարի 8-ին ներկայացրի Քննիչ Հանձնաժողովի նախագահին և որի պատճենը կցում եմ սրան, պատիվ ունեմ հայտնել ի գիտություն Խորհրդի հետևյալը:

Իմ հանձնարարությամբ անցյալ տարվա գեկտեմբերի 9-ին Ղարաքիլիսայի շրջանը մեկնած քննիչ Դմիտրի Միխայլովիչ Գավրիլովը (Թիֆլիսի նահանգական դատարանի նախկին դատախազի օգնական և նախկին անգամ) այս տարվա փետրվարի 22-ին վերադարձավ այնտեղից՝ բերելով իր հետ բազմաթիվ վկաների ցուցմունքներ, որոնք լույս են սփռում անցյալ տարվա գարնանը Ալեքսանդրապոլի դավառից և մերձակա վայրերից տաճիկների ձեռքով էրզրում տարված գերիների կրած տառապանքների վրա և գրեթե սպառիչ նյութ են մատակարարում տաճիկների Ղարաքիլիսայի շրջանում կատարած խժդժությունների պատկերը տալու համար: – Թիֆլիս վերադառնալուց հետո՝ պ. Գավրիլովը մինչ այժմ զբաղված է եղել մի կողմից իր հավաքած նյութերը մի ընդհանուր տեսության մեջ ամփոփելու գործով, մյուս կողմից՝ ստուգելով և վավերացնելով այդ նյութերի պատճենները, որոնցից մեկը պատրաստում է եվրոպական Հայ պատվիրակության համար: – Երկրորդ գործը վերջանալու վրա է, ինչ առաջինը կվերջանա մինչև այս ամսի վերջը:

Թիֆլիսում աշխատող քննիչը՝ Թիֆլիսի նահանգական դատարանի նախկին դատախազի օգնական Արկադի Արկադիչ Լոնդինովը դեկտեմբերի սկզբից մինչև մարտի կեսը հարցաքննել է բազմաթիվ վկաներ Անդրկովկասի բոլոր շրջաններում թուրք–տաճկական խուժանավարների ու ասկերների կատարած բռնությունների ու ավերների մասին և զննության (осмотр) է ենթարկել նույն հարցին վերաբերյալ մի շարք կարևոր վավերագրեր: – Այդ նյութերը ամփոփված են չորս հատորում, որոնց պատճենները արդեն հանված են գրամեքենաներով և պատճեններից մի օրինակ արդեն հանձնված է Եվրոպական պատվիրա-

կության անդամ Միք. Պապաջանյանին Եվրոպա տանելու կամ ուղարկելու համար: – Արկ. Արկ. Լոնդինովը ստուգել և վավերացրել է տյդ բոլոր պատճենները: – Մարտի կեսից նա՝ իմ հրահանգի համաձայն՝ ընդհանրապես դադարեցրել է վկաների հարցուփորձը և հարցաքննում է ամենակարևոր վկաների բացառիկ դեպքերում և սկսել է կազմել մի ընդհանուր ամփոփումն իր հավաքած նյութերի՝ տեղագրական ու ժամանակագրական կարգով:– Այդ գործը նա կվերջացնի մինչև ապրիլի կեսը:

Ես հրավիրել էի նաև մի հայ իրավաբան իբրև քննական մասնաժողովի անդամ: – Այդ իրավաբանը, երդվյալ հավատարմատարի օգնական Ալեքսանդր Մարգարյանը դեկտեմբերի սկզբից մինչև մարտի կեսը ընթերակայել է Ա. Ա. Լոնդինովի հարցաքննություններին, աջակցելով նրան հարցմունքների տալում, իբր ավելի տեղյակ կատարված փաստերին և հայությանը հետաքրքրող խնդիրներին, և մասամբ թարգմանի դեր կատարելով ռուսերեն չիմացող վկաների համար: – Բացի դրանից նա մասնակցել է ցուցմունքների պատճենները ստուգելիս:

Գալով անձամբ ինձ՝ 1) ես հրահանգներ եմ ավել քննիչներին՝ վկաներին հարցաքննելու ձևի և սահմանների նկատմամբ, շատ քիչ դեպքում, այն էլ ռուս քննիչի առաջարկով, մասնակցելով հարցուփորձին, որպեսզի նրա (ռուս քննիչի) անկախությունը հայկական ազդեցությունից՝ ամեն կասկածից վեր լինի. 2) ես ուսումնասիրել եմ արդեն կատարված հարցուփորձը և մատնանշել, թե ինչ լրացուցիչ հարցեր պիտի պարզել արդեն հարցաքննված կամ նոր վկաների հարցուփորձով. 3) ուսումնասիրել եմ մեզ ներկայացրած և ուրիշ հիմնարկություններից ձեռք բերված գրավոր վկայություններն ու աշխատությունները և ընտրել նրանցից կարևորները, որ կամ թարգմանել եմ տվել ռուսերեն հմուտ թարգմանիչ Վարդգես Ահարոնյանի ձեռքով կամ հրահանգել, որ ամփոփ կերպով ինքը վկան կամ քննիչը արձանագրեն իբրև ցուցմունք. 4) ուսումնասիրել եմ հայ ու ռուս պարբերականներում հայահալած բռնություններին վերաբերյալ նյութերի մի մասը (այդ ուսումնասիրությունը դեռ շարունակվում է). 5) ուսումնասիրել եմ հայկական կոտորածներին վերաբերյալ այն եվրոպական հեղինակությունները, որ կարելի էր գտնել Թիֆլիսում, և տաճիկ կառավարության հանձնարարությամբ խմբագրված ու ծախքերով հրատարակված երկու գիրք, որոնք մի տեսակ մեղադրական են հայ ժողովրդի դեմ և պաշտպանական՝ տաճիկ կառավարության օգտին, և կազմել եմ հերքումն այդ գրքերի, որի մեջ վեր եմ հանել նրանց մեջ պարունակված կեղծիքներն ու ստությունները (այդ հերքման մի մասը պարբերաբար տպվեց «Հառաջ» թերթի բանասիրականներում):

Ապրիլի կեսին, երբ, հույս ունեմ, պարբերականներից նյութեր քաղող կամ ավելի ճիշտ ասած քաղելիք նյութերի ցանկը կազմող բաժինը ինձ կտա համապատասխան բոլոր նյութերի ցանկը և մասնավորապես 1918 թվին վերաբերյալ նյութերինը, որոնք ամենակարևորն են իմ

---

* *Տե՛ս էջ 292-ի ծանոթագրությունը:*

աշխատության համար, և մյուս կողմից կստանանք «Վշտապատումի» և Բաքվի Անկետային Մասնաժողովի նյութերը, որ բերելու համար այսօր Քննիչ Հանձնաժողովը իմ առաջարկով Բաքու ուղարկեց քննական մասնաժողովի անդամ պ. Ալ. Մարգարյանին,– ես կձեռնարկեմ վերջնական ամբաստանագիրը կազմելու տաճիկ կառավարության, իթթիհատական խուժանավարների և նրանց անդրկովկասյան համհարզների դեմ («Վշտապատումի» նյութերը սեպտեմբերին Բաքվից փախցրել են Էնզելի, այնտեղից բավական ուշ հետ բերել Բաքու և այնուհետև մինչև օրս Բաքվի Ազգային Խորհուրդը, չնայած մեր բազմանվաղ դիմումներին, չի ուղարկել մեզ, որովհետև, ինչպես բացատրեց ինձ վերջերս Թիֆլիս ժամանած նույն խորհրդի նախագահ Աբ. Դաստակյանը, վստահ չէ, որ թղթերը ապահով տեղ կհասնին):

Իմ բաժնի աշխատանքների հետևանքը, բացի հավաստիության երաշխիքներ ունեցող ցուցմունքներից, հանդիսանալու է մի աշխատություն (ամբաստանագիր), բաղկացած հետևյալ մասերից. 1) Ներածություն (վերոհիշյալ տաճկական պաշտոնական հրատարակությունների հերքումն, որի նպատակն է հոգեբանական հող պատրաստել, որպեսզի չեզոք մարդիկ, որոնք դատավորների դեր են կատարելու մեր խնդրում, վստահությամբ վերաբերվեն մեր առաջադրած փաստերին և անվստահությամբ՝ դեպի տաճկական պատճառաբանությունները. 2) Տաճկաթուրքական գազանությունների հաջորդական ըստ հնարավորության լրիվ նկարագրությունը համաշխարային պատերազմի ընթացքում Անդրկովկասում (այդ մասի մեջ կմտնեն ռուս երկու քննիչների ամփոփումները, որոնք ինքնին մի տեսակ վկայություններ են քննություն կատարած չեզոք հեղինակավոր անձանց կողմից). 3) Տաճկաստանում կատարված տաճկա-քրդական գազանությունների լրացուցիչ պատկերը. 4) Եզրակացություն. 5) Հավելված, որի մեջ կմտնեն ամենաէական ցուցմունքները և վավերագիրը:

Այդ աշխատությունը պատրաստվում է ռուսերեն և արդեն մասամբ թարգմանված է (իմ ձեռքով) հայերեն:

Ամբաստանագրի գլխավոր բովանդակությունը կազմելու են ռուսահայության կրած սարսափները հետևյալ նկատառումներով.

1) Այդպես է որոշված Քննիչ Հանձնաժողովի հենց սկզբի նիստում, քանի որ մեր Հանձնաժողովը ավելի ձեռնհաս կարող էր լինել այդ հարցում, ավելի հնարավորություն ուներ այդ հարցը ուսումնասիրել և միայն ինքն է, որ պիտի զբաղվի դրանով, մինչդեռ տաճկահայկական սարսափների մասին կային արդեն հեղինակավոր գրքեր, հրատարակված օտարների ձեռքով, և արժեքավոր ուսումնասիրություններ, կատարված հայերի ձեռքով (ինչպես օրինակ «Վշտապատումը»):

2) Գործին ձեռնարկելուց հետո նոր իրողություններն ավելի ևս հաստատեցին Հանձնաժողովի տեսակետի հիմնավորությունը: –Պոլսում սկսվեց եռանդուն աշխատանք տաճկահայկական տառապանքների ուսումնասիրության համար և այնուհետև նույնիսկ պաշտոնական դատավարություն՝ ջարդարարներին պատժելու և տաճկահայության կրած վնասները ճշտելու նպատակով: – Տաճկահայ փախստականները

մեր աշխատանքների միջոցին կենտրոնացած էին գլխավորապես Սուխումի շրջանում և Հյուսիսային Կովկասում: Մենք փորձեցինք այնտեղ լիազորներ նշանակել, սակայն ստեղծված քաղաքական պայմանները բոլորովին անհնար դարձրին որևէ ուսումնասիրություն և մեր լիազորները ոչ մի գործ չկարողացան կատարել այդ շրջաններում:

3) Իմ կազմելիք ամբաստանագիրը պիտի ոչ միայն բարոյական – քաղաքական նպատակ ունենա, այլև գործնական: Մինչև ինձ չհաջողվի ապացուցանել, որ այսինչ շրջանում տաճիկ ու թուրք պաշտոնյաները, զորքը կամ խուժանավարներն են եղել խժդժություններ կատարողը և հաստատել նրանց մեղավորությունը, ինչքան էլ հաստատված լինի տեղական հայության կրած վնասների քանակը, վնասվածները ոչ ոքից ոչ մի կոպեկ չեն ստանալու: Եվ քանի որ Հանձնաժողովի տնտեսական բաժինը միմիայն կամ գլխավորապես ռուսահայության կրած նյութական վնասները ստուգելու հնարավորությունն ուներ, իմ գլխավոր ուշադրությունն էլ այդ կողմը պիտի ուղղված լիներ:

4) Ռուսահայության կրած տառապանքները ավելի թարմ են, ուստի նրանց վերաբերյալ ցուցմունքները տրվում են թարմ հիշողությամբ, իսկ վկաների ցուցմունքները, ceteris paribus, այնքան են գնահատվում, որքան նրանք ժամանակով մոտիկ են այն դեպքերին, որոնց վերաբերում են:

5) Ռուսահայության կրած սարսափները ընդհանրապես ահագին ապացուցական նշանակություն ունեն, որովհետև տաճկահայկական սարսափների նկատմամբ տաճիկ կառավարության փաստաբանները պնդում են, թե ոչ մի կառավարություն չէր կարող չպատժել իր ապստամբ հպատակներին: Մինչդեռ ռուսահայության վրա դործ դրած նույնանման բռնությունների նկատմամբ տաճիկ ջարդարարները չեն կարող առաջադրել նույնիսկ այդ պատրվակը: Այդ կողմից ամենամեծ նշանակությունն ունեն այն գազանությունները, որ տաճիկները կատարել են 1914 թ. նոյեմբերի սկզբից ի վեր, Արդվինի շրջանում, այսինքն այն ժամանակ, երբ ոչ Շատախի, Վանի կամ Զեյթունի «ապստամբություններն» էին տեղի ունեցել, ոչ էլ նույնիսկ հայ կամավորների հետ էին ընդհարվել տաճիկները:

Տ. Հովհաննիսյան

22 մարտի 1919 թ.
Թիֆլիս

ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 221, ց. 1, գ. 143, թ. 22–24: Թողոն: Ձեռագիր:

№ 23

ՔՆՆԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ՀԱՄԱՇԽԱՐՀ<ԱՅԻՆ> ՊԱՏԵՐԱԶՄԻՑ
ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԿՐԱՏ
ՎՆԱՍՆԵՐԻ

Պ. Վրթանես Փափազյանին

25 մարտի 1919 թ.
№ 85

Սրանով Քննիչ Հանձնաժողովս հայանում է Ձեզ, որ համաձայն մարտի 20-ի նիստի որոշման Ձեզ է հանձնվում լրագիրներից նյութեր հավաքելու գործի անմիջական ղեկավարությունը:

Հանձնաժողովս խնդրում է Ձեզ չուտափույթ գործի անցնել և բավարարել պատմա-քաղաքական և քրեական բաժնի վարիչների պահանջները:

Նախագահ՝ Հ. Թումանյան

ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 221, ց. 1, գ. 38, թ. 92: Վավերացված պատճեն: Ձեռագիր:

№ 24

Արձանագրություն

10՝ ապրիլի 1919թ.

Հովհաննես Թումանյանի նախագահությամբ և Ախալքալաքի, Գողթնի, Ղազախի, Գանձակի, Արտանուջ-Շավշետի, Լոռու և Նոր-Բայազետի հայրենակցությունների ներկայացուցիչների մասնակցությամբ կայացավ Միությունների միության կենտրոնական խորհրդի նիստը, որին ներկա էր և բացատրություններ էր տալիս քննիչ Բյուրոյի քրեական բաժնի վարիչ Տիգրան Հովհաննիսյանը:

Հովհաննես Թումանյանը մանրամասն զեկուցում է Բյուրոյի նյութական միջոցների մասին: Հայաստանի կառավարությունը, որ խոստացել էր տալ հիշատակագրի գործը վերջացնելու համար 300000 ռուբլի և որի անմիջական համաձայնությամբ ու մասնակցությամբ բյուրոն սկսել էր իր գործունեությունը, այժմ, հակառակ մեր բոլորիս ցանկությանն ու հույսերի, որոշել է տալ միայն 50000 ռուբլի, որից 20000 ռ. ստացված է եղել մի քանի ամիս առաջ, իսկ մնում է ստանալ միայն 30000 ռ.: Այս միջոցներով բյուրոն անկարող կլինի շարունակել իր գործը, ուստի ներկայիս նորա առաջ ակամա կանգնած է լիկվիդացիայի խնդիրը: Մինչդեռ բյուրոյի կատարած գործը այնքան նշանակալից և անհրաժեշտ է, որ նույնիսկ դաշնակիցների ներկայացուցիչները քանիցս տվել են իրենց կատարյալ հավանությունը այդ գործին:

Պ. Տ. Հովհաննիսյանը բացատրում է, որ գործը լիկվիդացիայի ենթարկելու համար անհրաժեշտ է ձեռք բերել միջոցներ – մոտավորապես 60–70

հազար: Մինչ գործը շարունակելու և վերջացնելու համար հարկավոր կլինի մոտ 100 հազար:

Մարգար Ավետիսյանը առաջարկում է պատգամավոր ուղարկել Երևան–Հայոց կառավարությունից ստանալու անհրաժեշտ գումարը: Այս առաջարկին դեմ են արտահայտվում–Համբարձումյանը, Դարբինյանը, Տ. Հովհաննիսյանը, Հովհան. Թումանյանը և այլք:

Վերջացնելով վիճաբանությունները խորհուրդը ձայների մեծամասնությամբ որոշում է. 1) հրահանգել քննիչ բյուրոյին շարունակել իր գործունեությունը, 2) հրավիրել խառն ժողով – խորհրդիս, Հայաստանի գիվանագիտ<ական> ներկայացուցչի, պատգամավորների, վիրահայ Ազգ<ային> խորհրդի և վաճառականության ներկայացուցիչների և քննել բյուրոյի գործունեությանը անհրաժեշտ միջոցներ հայթայթելու հարցը և 3) սկզբունքով ցանկալի համարել հայրենակցությունների նյութական օժանդակությունը բյուրոյի գործունեությանը, որի չափի ու ձևի մասին հարցը քննել առանձնապես:

Նախագահ՝ Հ. Թումանյան
Քարտուղար՝ /ստորագրություն չկա/

ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 244, ց. 1, գ. 15, թ. 18: Բնագիր: Ձեռագիր:

№ 25

Արձանագրություն

14 ապրիլի 1919թ.

Հովհաննես Թումանյանի նախագահությամբ կայացավ Հայրենակցական Միությունների կենտրոնական խորհրդի, քննիչ բյուրոյի, վաճառականության ներկայացուցիչների, Հայաստանի գիվանագիտական ներկայացուցչի, եվրոպական պատգամավորության ներկայացուցչի– Վրաստանի հայոց ազգ<ային> խորհրդի խառն նիստը, որին ներկա էին. Հովհաննես Թումանյանը, Պ. Աբելյանը, Հ. Համբարձումյանը, Ս. Լազարյանը, Միանսարյանը, Ա. Տեր–Գրիգորյանը, Հախումյանը, բժ. Զարգարյանը, Մարգար Ավետիսյանը, Դարբինյանը, տիկ. Ալիխանյանը, Ա. Շահվերդյանը, Տ. Հովհաննիսյանը, Լեոն, Լևոն Եվանգուլյանը, Միք. Բաբաջանյանը, Գ. Տեր–Պետրոսյանը, Ռ. Աֆրիկյանը, Բազգասարյանը, Արզումանյանը և Էլչիբեգյանը:

Նախագահ Հովհաննես Թումանյանը մանրամասն զեկուցեց բյուրոյի գործունեության և նրա այժմյան ֆինանսական դրության մասին– հայտնելով, որ Հայաստանի կառավարությունը ընդունել և սանկցիա է տված եղել քննիչ բյուրոյի գործին և պաշտոնապես խոստացել էր վճարել բյուրոյի ծախքերը ծածկելու համար երեք հարյուր հազար ռուբլի: Մինչ այժմ, հակառակ իր խոստման, որոշել է տալ միայն հիսուն հազար, որից նույնիսկ գուրս է գալիս այն քսան հազար ռուբլին, որ բյուրոյին տվել էր ա-

վանսով: – Այսպիսով բյուրոյի սկսած չափազանց կարևոր գործը մնում է կիսատ, որի պատասխանատվությունը ընկնում է անպայման Հայոց կառավարության վերա – շեշտում է զեկուցանողը–այնուհետև տեղեկություններ տալով այն մասին, թե ինչպես են վերաբերում բյուրոյի գործին դաշնակիցները: Նախագահը առաջարկում է ժողովին արտահայտվել: Լրացուցիչ տեղեկություններ բյուրոյի գործունեության մասին տալիս են պ.պ.Լեոն և Տ. Հովհաննիսյանը:

Բյուրոյի ֆինանսական բաժնի կառավարիչ Գեղամ Տեր-Պետրոսյանը զեկուցում է մինչև օրս եղած ծախքերի մասին և տալիս է իր եզրակացությունը, թե ի՞նչ գումար անհրաժեշտ կլինի սկսած գործը ավարտելու համար կամ այժմ իսկ լիկվիդացիայի ենթարկելու դեպքում: – Այս զեկուցումից պարզվում է, որ եթե կատարվի լիկվիդացիա և վճարվեն ռոճիկները մինչև ապրիլի մեկը – այս դեպքում հարկավոր է ունենալ ամենաքիչը 120000, որից բյուրոն ունի ստանալու Երևանի կառավարությունից 30000ռ. և այլ աղբյուրներից 10000: Ուրեմն լիկվիդացիայի դեպքում պետք է գտնել մոտ 80000ռ.: Իսկ գործը շարունակելու և ավարտելու համար հարկավոր կլինի մի քանի տասնյակ հազար ռուբլի ավելի, այն է՝ 30000–40000ռ. ավելի, այսինքն հարկավոր կլինի ձեռք բերել, բացի այն գումարներից, որ բյուրոն ունի ստանալու, մոտ 100000 կամ 110000 ռուբլի:

Լևոն Եվանգուլյանը առաջարկում է ներկայացուցիչ ուղարկել Երևան – համոզելու Հայաստանի կառավարությանը – վճարել անհրաժեշտ գումարը: Հակառակ տեսակետը պաշտպանում են Հովհաննես Թումանյանը և Հ. Համբարձումյանը: Միք. Բարաջանյանը շեշտում է բյուրոյի սկսած գործի չափազանց մեծ կարևորությունը և խոստանում է իր աջակցությունը, որքան այդ իրանից կախված կլինի: Պ. Աբելյանը պատճառաբանում է այն միտքը, թե հայ հասարակությունը, մասնավորապես վաճառականությունը պետք է բարոյապես գիտակցեն գործի ազգային նշանակությունը և հոժարությամբ վճարեն անհրաժեշտ գումարը: Ար. Շահվերդյանը գտնում է, որ ստեղծված պայմաններում ոչ մի այլ ելք և ուրիշ միջոց չկա. միակ միջոցը և աղբյուրը – հայ վաճառականությունն է, որին և պիտի դիմել ու խնդրել, որ նա տա անհրաժեշտ գումարը: Գեղամ Տեր–Պետրոսյանը հայտնում է, թե տեղական վաճառականությունը բյուրոյի ծախքերը հոգալու համար մասնատրված էր 220000 ռ., որից վճարված է միայն 90000 ռ.,– իսկ մյուս մասը դեռևս չեն վճարել – թեև – ավելացնում է Տեր–Պետրոսյանը – գժվար է հույս ունենալ այդ գումարները ստանալու վերա:

<u>Ժողովը որոշեց.</u>

ա) ընդունել, որ պարտքերի վճարումը առայժմ պետք է հետաձգվի:

բ) Ի հաշիվ Հայաստանի կառավարությունից ստացվելիք 30000 ռ. ֆինանսական հանձնաժողովի միջոցով ձեռք բերել փոխարինաբար 15000 ռ. և վճարել ծառայողների ռոճիկները:

գ) Միք. Բաբաջանյանի, Լևոն Եվանգուլյանի մասնակցությամբ և նախագահ Հովհաննես Թումանյանի միջոցով ստանալ անգլիական հրամանատարության վավերացումը հիշատակագրի համար:

դ) Տեղական վաճառականության ներկայացուցիչներին, մասնավորապես վնասները պահանջող վաճառականներին հրավիրել առանձին նիստի և առաջարկել հանձն առնել վճարել բյուրոյի անհրաժեշտ ծախքերը – գործը ավարտելու նպատակով:

ե) Մասնատրված վաճառականներից պահանջել խոստացված գումարները և

զ) Առայժմ բյուրոյի գործունեությունը կանգնեցնել:

Նախագահ՝ Հ. Թումանյան
Քարտուղար՝ Հ. Համբարձումյան

ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 244, ց. 1, գ. 15, թ. 20–21: Բնագիր: Ձեռագիր:

№ 26

Հայաստանի Գերագույն կոմիսար
Պարոն Հասկելին

Տեղեկագիր*

Համաշխարհային պատերազմից հայ ժողովրդի կրած վնասների քննիչ Հանձնաժողովը կազմակերպվել է 1918 թ. նոյեմբեր ամսի 22-ին** Հայրենակցական Միությունների միության նախաձեռնությամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության հավանությամբ և Վրաստանի Հանրապետության կառավարության թույլտվությամբ :

Քննիչ Հանձնաժողովը կազմված է չորս բաժիններից.–

1. Պատմա-քաղաքական , որի նպատակն է պատճառաբանել հայկական դատի արդարությունը: 2. Պատմա-զինվորական բաժին, որ պիտի պարզեր այն օգնության չափը, որ հայությունը հասցրել է Համաձայնության պետությունների հաղթանակի գործին զինվորական ասպարեզում: 3. Քրեական բաժին, որ պիտի արձանագրեր այն բոլոր տառապանքները, որ հայությունը կրել է Համաձայնության պետությունների թշնամի Տաճկաստանի ձեռքից և 4. տնտեսական բաժին, որ պիտի երևան հաներ և ստուգեր այն բոլոր նյութական վնասները, որ հայությունը կրել է տաճիկ ասկերներից և հրոսակախմբերից:

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը, որ շարունակ զբաղված էր սովի ու տաճիկ էմիսարների սադրանքով գործող ապստամբների ու հրոսակախմբերի դեմ կռվելով, ոչ միայն հնարավորություն չունեցավ կազմակերպել այդ գործը, այլև շատ ուշ կարողացավ դրամական նպաստ տալ Հայրենակցական Միությունների միությանը, այնպես որ <1 անընթ.> և երկար ժամանակ տարվեց մասնավոր միջոցներով:

---

* «Տեղեկագիրը» ռուսերեն թարգմանությամբ և զգալի կրճատումներով հրապարակել է Վ. Ղազախեցյանը (տե՛ս В. Казахецян. О материальном ущербе, нанесенном армянскому народу в Закавказье и в Карсской области турецкими интервентами.– ՀԽՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1987, №2, էջ 87–88, ծանոթ. մեջ):

** Պետք է լինի նոյեմբերի 21-ին (տե՛ս №6 փաստաթուղթը):

Այդ հանգամանքը, ինչպես նաև չարաբաստիկ հայ–վրացական պատերազմը, որի շնորհիվ բավական ժամանակ խզվեց և առհասարակ դժվարացավ հաղորդակցությունը Թիֆլիսի և Հայաստանի միջև, մյուս կողմից այն հանգամանքը, որ Ադրբեջանի սահմաններում քննիչ Հանձնաժողովը թույլտվություն չուներ քննություններ կատարելու, այն հետևանքն ունեցավ, որ քննիչ Հանձնաժողովը չկարողացավ իր գործը լրիվ ավարտել կարճ ժամանակամիջոցում:

Մինչև այժմ քննիչ Հանձնաժողովը կարողացել է կատարել հետևյալը.

1) Հրատարակել է պատմա-քաղաքական բաժնի վարիչ պ. Լեոյի «Սահմանավեճեր» աշխատությունը, որի մեջ հեղինակը դիտական տվյալներով պարզում է այն իրավունքները, որ հայ ժողովուրդը ունի այդ շրջանների վրա:

2) Պատրաստել է և Հայաստանի կառավարության միջոցով Պարիզի հայ պատվիրակությանն է ուղարկել հայ կամավորական շարժման պատմությունը, ինչպես նաև նյութեր այն կռիվների մասին, որ վարել են հայ զորամասերը տաճիկ զորքի դեմ ռուս զորքի Կովկասյան ճակատը լքելուց հետո:

3) Ռուս քննիչների (Թիֆլիսի շրջանային դատարանի նախկին դատախազների) միջոցով արձանագրված են հազարավոր ոչ միայն հայ, այլև օտարազգի վկաների ցուցմունքները, այն բռնությունների ու գազանությունների մասին, որ տաճիկ ասկերները կատարել են Հայաստանում և Անդրկովկասում: Այդ վեց հատորներում ամփոփված ցուցմունքների վավերացրած պատճեները ուղարկված են Պարիզի Հայ պատվիրակությանը:

4) Ռուսաց նախկին կառավարության կատարած պաշտոնական ուսումնասիրությունների հիման վրա պարզված է Անդրկովկասի զանազան շրջանների հայաբնակ գյուղերի առանձին տնտեսության միջին արժեքը և տնտեսությունների թիվը և այդպիսով ճշտված է այն նյութական կորուստը, որ ունեցել են տաճիկների ձեռքով ավերված գյուղական հայ համայնքները Անդրկովկասում, այն է՝ հինգ միլիարդ ռուբլի ներկա տարվա սկզբի գներով:

Այդ թիվը իրականությունից ցած պիտի համարել, որովհետև նախ՝ քննիչ հանձնաժողովը դեռ հնարավորություն չի ունեցել ճշտել ավերմունքների բոլոր դեպքերը և երկրորդ՝ ռուս կառավարության հավաքած տվյալները գյուղական տնտեսությունների արժեքի մասին ինքնին իրականությունից ցած են, որովհետև այդ տվյալները ռուս պաշտոնյաները հավաքել են հարկահանական նպատակներով, իսկ այդպիսի դեպքերում գյուղացիք առհասարակ աշխատում են պակաս ցույց տալ իրանց նյութական կարողության չափը, որպեսզի պակաս քանակով հարկ վճարեն:

5) Գյուղական համայնքներից զատ, առևտրաարդյունաբերական ու գյուղատնտեսական ձեռնարկությունների և քաղաքաբնակ հայերի կրած վնասների քանակը պարզելու համար ընդունել է և ցուցակագրել 11, 588 հայտարարություն ռուսահայերից (բացի Բաքու քաղաքի բնակիչներից, որոնց կրած վնասները ցուցակագրվում և ճշտվում էին անգլիական հրամանատարության կարգադրությամբ Բաքվում կազմված հատուկ կոմիտեի ձեռքով, և դարաբաղցիներից, որոնց հայտարարությունները քննիչ

Հանձնաժողովի Շուշվա բաժանմունքը ուղարկել է անմիջապես Բաքու՝ անգլիական հրամանատարությանը), 1655 հայտարարություն տաճկահայերից և 353 հայտարարություն պարսկահայերից: Այդ անհատական հայտարարությունների մեջ միմիայն ռուսահայերը (բացի Բաքվի բնակիչներից և ղարաբաղցիներից) ցույց են տվել հետևյալ քանակությամբ վնասներ. գյուղատնտեսները 1914 թվի գներով 6970845 ռ., բացի այդ 1916-ի գներով 8851696, և վերջապես 1918-ի գներով – 40997903 ռ.: Առևտրաարդյունաբերողները՝ 1914 թ. գներով – 24316342 ռ., բացի այդ՝ 1916 թ. գներով– 29910833 ռ. և վերջապես 1918 թ. գներով–110748859 ռ., իսկ սոսկ քաղաքացիները՝ 1914 թ. գներով– 47614499 ռ., բացի այդ՝ 1916-ի գներով– 107687473 ռ., և վերջապես 1918-ի գներով– 278747277ռ.:

Սակայն այդ թվերը մի կողմից ստուգման, մյուս կողմից լրացման կարոտ են, – ստուգման՝ այն պատճառով, որ հայտարարություն տվող անհատներից շատերը անշուշտ ձգտած կարող են լինել չափազանցացնել իրենց կրած վնասները, իսկ լրացման՝ այն պատճառով, որ գեռ կան հազարավոր փախստական հայեր, որոնք Հյուսիսային Կովկասից ու Վոլգայի ափերից գեռ վերադարձած չլինելով՝ չեն կարողացել իրենց կրած վնասների մասին հայտարարություններ տալ:

Քննիչ Հանձնաժողովը իր ստացած հայտարարությունները հանձնել է Հայրենակցական միությունների վարչություններին ի ստուգություն, սակայն քննիչ Հանձնաժողովը բավարար չի համարում այդ, և ցանկալի է համարում, որ Բաքվի օրինակով Թիֆլիսում էլ կազմվի մի վերաստուգիչ (կոնտրոլային) կոմիտե, որ վերաստուգի Հայրենակցական միությունների ստուգած հայտարարությունները:

Ստուգման այդ ձևը բավարար հետևանքներ է տվել Բաքվում, ուր անգլիական հրամանատարության կարգադրությամբ կազմված վերաստուգիչ (կոնտրոլային) կոմիտեն քննում էր միայն այն հայտարարությունները, որոնց վրա մակագրված էին լինում տնային կոմիտեների կարծիքները հայտարարությունների մեջ ցույց տված գումարների ճշտության մասին:

Եթե Դուք, պ. Գերագույն Կոմիսար, հաճեիք կարգադրել, որ կազմակերպվեր այդպիսի վերաստուգիչ Հանձնաժողով Համաձայնության պետությունների ներկայացուցիչներից, քննիչ Հանձնաժողովը իր բոլոր նյութերը կգներ այդ կոմիտեի տրամադրության տակ: Իսկ եթե Բաքվի օրինակով միայն Կոմիտեի Նախագահին կհաճեք նշանակել, քննիչ հանձնաժողովը պատրաստ է կազմակերպել վերաստուգիչ Կոմիտե–միանգամայն չեզոք և ձեռնհաս անձերից:

Պարտ ենք համարում զեկուցանել և այն, որ արդեն 10000 բաքվեցիներ կան, որոնք Հյուսիսային Կովկասից և Վոլգայի ափերից վերադարձել են այն ժամանակ, երբ լրացել է Բաքվի կոնտրոլային կոմիտեի խնդիրք ընդունելու համար նշանակած պայմանաժամը: Այդ 10000 բաքվեցիների լիազորները մեր միջոցով խնդրում են Ձեզ, պ. Գերագույն Կոմիսար, որ նրանց համար վերականգնվի խնդիրք տալու պայմանաժամը, ինչպես նաև այն բաքվեցիների համար, որոնք ապագայում վերադառնալու են Հաշտարխանից:

Քանի որ Բաքվի կոնտրոլային կոմիտեն առժամանակ դադարեցրել է իր գործունեությունը, այդ խնդիրները կարող են տրվել քննիչ Հանձնաժողովիս:

Հանձնաժողովի նախագահ
ստորագրված է (ստորագրված է Հ. Թումանյան)
1919 թ. սեպտեմբերի 30
Թիֆլիս

ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 202, ց. 1, գ. 1271, թ. 28–30: Վավերացված պատճեն: Ձեռագիր: